

ԻՄԱՄԻՍ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՇԱՐԱԾԱԾԵՐԹ

Տնօրէն-խմբագիր

ԵՆՈՎԷՅ ԱՐՄԷՆ



ՏԵՐԴ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ Բ. ՏԱՐԻ ԹԻԻ 14-15

1 ՄԱՐՏ 1908

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

«Գաղօրէններ»

Բլաւա Շուման

ՔԱՌՄԷՆ-ՍԻԼՎԱ-Ի

Ճանչուր Դեմիր. — ՎԼԵԽԱ

Սկիւսարի Սոխապ

Բանաստեղծութիւններ

Մասներդ

Այլերդ

Յոյն Գարունի մը Զարուիւն Առած

ԷՏՈՒԱՌ-ՇԻՒՌԷ-Ի

Զղջում

Նկարագիրք եւ Սիրք

Ըրածնիս Բժեկութիւնն է

Զարուիւն Մարտեան եւ իր Նոր երկը

Յաժուսներ

Յովնանէն Միսէնիսիսեան

Սաացում գիրքեր

ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ-Ի

ԴՍԱՌՄԷՆ-ՍԻԼՎԱ-Ի

ՅՈՎ.Վ. ՊԱՏ. ՏԷՐԱՅԵՆՆԻ

Ե. ՍԼԻԲՍԱՆԵԱՆ-Ի

ՅՈՎ.Վ. ՄԻԻԷԷՆՏԻՍԵԱՆ-Ի

ՆՇԱՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ-Ի

ԵՆՈՎԷՅ ԱՐՄԷՆ

ԶԻՅԹԷ-ՍԱՐԱՑ

ԹԷՈՂԻԿ

ԹԷՈՂԻԿ

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ

Ռ. ՍԵԻԱԿ

ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՏՕՔԹ. ՊԵՆՈՆ ՊԵՋԱԶԵԱՆ

ՏԻԳՐԱՆ ԶԷՕԿԻՐԵԱՆ

ԷՆՍԹԱՆԹԱՆԷ

ՆՇԱՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ



THE
LIBRARY
OF THE
CONGRESS

PHOTODUPLICATION SERVICE

UNIVERSITY MICROFILMS

300 NORTH ZEEB ROAD

ANN ARBOR, MICHIGAN 48106

1981-1982

1981-1982

1981-1982

1981-1982

1981-1982

1981-1982

1981-1982

1981-1982

1981-1982

1981-1982

1981-1982

1981-1982

1981-1982

1981-1982

1981-1982

1981-1982

1981-1982

1981-1982

1981-1982

1981-1982

1981-1982


1981-1982

ՏՕՒԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ,

ԹԻԻ 12

աղիքներու, միջային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին և նոր դաղիական ակտերը: Այս վերջին ակտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորադոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Չորեքշաբթի օրերը միայն ձրի:



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, լայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և տագուկի աղբիւր մըն է:

Ս Ի Ն Կ Ե Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՓԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոսքի ու ոսքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. այս մեքենան ամէնէն աւելի կատարելագործուածը, հաստատունը և դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդատաւարի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը դնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկերի Ընկերութեան վաճառատուններուն մէջ:

Ն
Ա
Ս
Ի
Ն
Կ
Ե
Ր
Ս
Ի
Ն
Կ
Ե
Ր
Ս
Ի
Ն
Կ
Ե
Ր

ԿԱՆԱԹԱՍ

ԲԵՐԱ

ՊԱՆԱՍ

ՄԱՍԻՍԱՐ

1. Մեծ փողոց, Պոն Մառէի դէմ, 343 և 343.
2. Մեծ փողոց, Կալթա Սէրայի Լիւէին դէմ.
1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.
1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Պէյադիտ, Թրամվէյի կայանին դէմ. 13.
- (Զարչը Պօյու, Թ. 120.
- (Դասերը եւ նորոգութիւնները ձրի.

Կատարելալ երաշխաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչապետին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թիւ 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

Ճ. ՍԻՄՕՆ

Բարիկ



Ք Ր Է Մ

ՍԻՄՕՆ

Կիսեթինով պատահում
եւ առանց որ եւ է հարգանքն խղի
Լուսադոյն արտադրութիւնն է
ան՝ պահպանելու համար ԴԷՄ-
ՔԻՆ ՈՒ ՉԵՌՔԵՐՈՒՆ
Ճերմակութիւնը

1900ին բարեկեանս ոսկի շնորհով

Քրեմ Սիմոնը մօրթը կը պահպանէ օդին ազդեցութեան դէմ .
ճաթառութիւններուն , կարմրութիւններուն եւ խորշակահարութեան
առաջքը կ'առնէ :

Եթէ վրայէն Սիմոնի քրեմալոշի թեթեւ խաւ մը քսուի ,
դէմքի գոյնին երկատարղութեան չլացուցիչ փայլ մը կու տայ :
Պէտք է ամէնօր գործածել զայն , թաց լաթով մը մօրթին վրայ
տարածելով եւ յետոյ մեղմ շփուածով մը ներս թափանցել տալով :
Ճարպային ոչ մէկ մարմին չպարունակելով , ամբողջովին կը
լուծուի ջուրին մէջ :


ՄԻՋԵՆ Է ԱՆ ՈՐ ԸՆԴՈՒՆՈՒՄԻ ԸՂԼԱՅ ԲՈՂՈՐ ԴԵՂԱՆԻ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ-
ՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ :

1860ին հնարուած , իսկապէս անողջապանիկ ու ոմենաառաջ-
նակարգ Քրեմն է ան աղոյրութեան : Բովանդակ աշխարհի մէջ
իր ունեցած յաջողութիւնը առաջ բերած է բազմաթիւ կեղծեր ,
որոնցմէ պէտք է խորշիկ ու խոյս տալ :

Քրեմ Սիմոն , քրեմալոշի Սիմոնը եւ Սիմոնի
օճառը կը գտնուին զեղարաններուն , անուշահոտ-
թեան վաճառատներուն եւ պագարներու մէջ :



Գնած ասէր պէտք է լաւ լցնել վաճառանիք՝ որ պէտք է ըլլայ
ոլլի պակսերին հիօս նմանը :



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱՔԱՐԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ԵՆԱԳՐԱՐԱՐՈՒՄ

ԵՇՐԴ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ Բ. ՏԱՐԻ ԹԻԻ 14-15

1 ՄԱՐՏ 1908

“ԲԱՊՕԹԷՆ” ՆԵՐԸ

Ատենէ մը իվեր, մեր զրականութեան մէջ սկսած են զլուս ցցել տեսակ մը տիպարներ, որոնք բաւական զուարճալի կողմեր կը պարզեն: Անոնց գոյութիւնը կը չեղտուի մանաւանդ այն սնամէջ ու փքոց-ուռոյց ունայնամտութիւնով՝ որով ուսած են: Այդ փքացումը զիրենք զինովցուցած է մինչև իրենց երակներուն վերջին ծայրը: Անոնք գոհ են ու երջանիկ, անալլայլ սնափառութեան մը իրենց պարզեւած ինքնազուարճ հաճոյքին մէջ: Ակիւտաբար արատաւրած էր այդ բերքէն երկու հատ, որոնք գէթ իրենց սրտահմին մէջ պարփակուելու և հոն միայն իրենց փքացումի փորձերը պարզելու սակաւապէտութիւնը ունէին, քիչ անգամ դուրս ելլելով մարմերնին ծածկող կեղեւէն, տիտանի չարժուածք մը սարքելու կամ ահաբեկիչ պատգամ մը որոտալու եռանդով, պարզամիտ հանդիսատեսներու առջև, զորս կը կարծէին աղշութեան մասնիկ և սոսնակիկ, իրենց եզական իմացականութենէն ճառագայթող ահաւոր քարոզչութիւններով: Ասոնք ատենի մը համար բաւական քրքիջ կը հայթայթէին՝ ծիծաղելի մնջկատակ դերասանի մը իրենց զուարճալի չարժուածքներուն վրայ և կը սուսցուէին: Անոնք որ, այսօր, այդ տիպարներէն կազապարուած, կը կրկնեն անոնց դերը գրականութեան մէջ, աւելի՛ եռանդուն են և աւելի՛ կատարելագործութեան կը մղեն իրենց զաւեշտական դերակատարութիւնը: Նոր զրականութեան մը ինքնահաշակ առաքեալներն են ասոնք, առգորուած բոլոր եղած գրական ձևերէն տարբեր ձև մը հնարելու մենամարտութիւնով: Գրական կորուած ճամբաները իրենց համար չեն, ընդունուած ու տարիներով մշակուած ձևերը, սեւերն ալ ատելի են իրենց: Իրենք նոր բան մը

Կան . բանաստեղծ . ով կրնայ ինքզինքը բանաստեղծ հռչակելու իրա-
 ւունք ունենալ իրենցմէ դատ, իրենք՝ որ աշխարհ և օմեղսն են զրա-
 կանութեան, սկիզբը և վախճանը : Եւ այս բանգագուշանքին մէջ ,
 անոնք նուիրուած են ընկու գրականութիւն մը՝ որ , մի՛շտ իրենց խել-
 քով , գրականութեան իտէալ ձեռն է : Ինչ որ անկէ դուրս կը մնայ ,
 ինչ որ ուրիշինն է ,—ըլլա՛յ ան դորձը տմէնէն հոյակապ հեղինակնե-
 րուն ,—արձամարհելի է , անարժէք է : Միտքի ախտային վիճակ մը՝ որ
 կը բացատրուի միայն հոգեբանական ակադեմիականութիւնով : Եւ ո՛րչափ
 ալ զաւեշտական, ստոյգ իրողութիւն մըն է այս երեւոյթը՝ նոր մէջտեղ ելած
 քանի մը պոէտներու քով , չեղած ան համեմատութիւն մը կ'առնէ
 օրէ օր : Այդ երեւոյթը կ'արժէ՝ նկատողութեան տունը , որովհետեւ ան
 անգիշտիկ ներգործութիւն մը ունենալ սկսելու ճամբուն մէջ է , ջանքե-
 քովը պրական խմբակին ցոյց տուած խլրտումներուն : Ահա՛ անոնք
 իրենց գրական ձգտումները նուիրագործելու ճարտարամիտ հնարքին
 մէջ , զոր աղէ՛կ յապցած ու կազմակերպած են : Առաջին սկզբունք՝
 իրերագոյնութիւն և հրապարակային փոխադարձ գովաբանութիւն , տո-
 կոսաւոր կամ անտոկոս , կանխաւ բանակցութիւնով , առանց բանակ-
 ցութեան , խմբովին նիստով նախաքննուած ու ծրագրուած , ի՛նչպէս որ
 յարմարի : Երկրորդ պայման՝ իրարու պաշտպանութեան պատրաստակա-
 մութիւն , զիրար ստակելու առաջագրութիւնով լիաբուն՝ հանճարի ,
 տաղանդի դափնիներով , անխնայ , առատաձեռնօրէն : Այս ճամբով ,
 երբ անոնցմէ մէկը խօսելու կ'սկսէ խմբակին միւս անդամին վրայ , չվա-
 ռանիր երբեք զայն հռչակելու գրականութեան արտարը՝ ներկայացնե-
 լով իր պաշտելութեան սուտրկան այն տեսակ էակ մը , որ լրումը ըլլայ
 ամէն կատարելութեան : Իրենց փորձութեան ժամերուն մէջ , ազատարար
 գոտիի հնարքն ու ունին անոնք սարքած , կազմ ու պատրաստ , իր փրկա-
 քար թեւ երկարող , վտանգուած կեանքին : Մէկը կամ միւսը , առաջ կ'անց-
 նի , չեղոք յօդուածի մը պատրուակին տակ , կողմնակի սպրդումներով
 պաշտպանելու՝ վտանգուած դատը ընկերոջը , այն տեսակ անձնագոհ
 հաճոյակատարութիւնով մը , որ զարմանք կ'ազդէ : Նաեւ իրենց երկրպա-
 դած գրականութիւնը նուիրագործելու համար , միջոց ընտրած են մի-
 այն՝ ամէն կարելի գոտեպնդութիւնով՝ քարկոծումի ենթարկել ուրիշ
 մը , ուրիշի մը գրականութիւնը , որ համակրութեան իր քուէն չահած
 է արդէն : Ան պատուհասի մը պէս կը ցցուի իրենց աչքին գէժ եւ կը
 սարսափեցնէ զիրենք : Այդ պատուհասը վանելուն , զայն անչքացնելուն ,
 օչնչացնելուն մէջ կը գտնեն իրենց գոյութեան իրաւունք չահելու յոյսը :
 Սոր համար , պէտք եղած տուն , առաջ կը քնն իրենցմէ մէկը , իրա-
 խուսիչ քաջաբերութիւններով ունեցնելով անոր կուրծքը , որպէսզի ելլէ
 պոռայ ու հասկցնէ բոլոր ուժովը՝ մեծութիւնը , տաղանդը ոտքի տակ
 գացող բարեկամին եւ որդէսղի չատ մըն ալ ճամարտակէ գիտցած եւ

չգիտցած բաներուն վրայ : Այս բոլոր զաւելատական խաղաղութիւն-
ներուն մէջ , կարեւորը զիմանալն է թէ՛ գրականութեան նոր ձեւի մը
ստեղծումին բանդադուշանքովը տողորուած այս երանելիները ի՞նչ յոյ-
սեր կը ներշնչեն և ո՞ր աստիճան կ'արդարացնեն իրենց զաւանցանքը :
Թէ իրաւ բա՞ն մըն է այն ճիգը՝ որուն հողինին մարմիննին են նուիրերս
Իսկողէս յիմարական փորձ մըն է այդ ձեռնարկը , ա՛նաւոր խելկատա-
կութիւն մը , որուն մէջ իրենց առած ծիծաղելի զիրքը՝ բաւական
դարմանալի է թէ՛ ի՛նչպէս չեն զգար և ի՛նչպէս չեն ամօթահարիր անոր
առթած՝ ախուր զաւելատականութենէն : Գրական բոլոր ընդունուած ձե-
ւերէն դժգո՞ւ և նոր ձեւի մը ստեղծագործումին բուն ճիգին յանձ-
նուած այս խելացիները՝ արդէն վաւերացուած համբաւով , ճանչցուած
հեղինակութիւնով և նշանակելի արդիւնքով մը պարծիլ կրցող
դէմքեր չեն գրականութեան մէջ , ինչպէս պիտի սպասուէր : Անոնք
երէկուան տղաքն են , գրիչը հաղիւ ձեռքերին առած և դեռ գօտի-
նին կաղած չկողած մանչուիներ , որոնք ելած են հասակնուն ու միա-
քերտուն վեր ձեռնարկ մը իրականացնելու , առանց անդարդաւանալու
թէ՛ ի՛նչ կարողութիւն , ի՛նչ հեղինակութիւն կը տրամադրեն այդ
ջանքին , քանի որ գրական եղած գործէ մը աւելին կարենալ մէջտեղ
հանելու համար , գոնէ այդ եղածը մշակելու կարողութիւնը ունենալ
պէտք է , մինչ իրենք հիմնովին զուրկ կը մնան այդ իսկ կարողութե-
նէն , ըլլալով միջակ ու դեռ տճաս միտքեր , նոյն իսկ անկազմակերպ ,
անինքնագիտակից , անընդունակ՝ արուեստի բարձր խոյանքներու , Հա-
զիւ գլուխին վերցուցած քանի մը հեղինակներու չմարտուած ընթեր-
ցումներէն , աղղուած անոնց տիրող և հուժկու տաղանդէն , զանոնք
կապկելու , անոնց պէս ըլլալու , անոնց գրականութիւնը բնելու կ'ըլ-
լեն , առանց հաշուելու իրենց զաճաճի զիրքը , վտիա իմացականու-
թիւնը և ոգորմելի տաղանդը՝ հանդէպ երազուած տիպարներուն . — կո-
վին նմանելու համար գորտին ուսելու ճիգը , որ պայթելով կը վեր-
ջանայ : Հիմնոտացած սակայն իրենց տիպարներուն անզ ներգործու-
թենէն՝ իրենց միտքին վրայ , շանթահարուած արդիւնքէն անոնց տա-
ղանդին և ցնցուած աղղկցութենէն հակայ գործերուն , յուսի կապկու-
թեան մը մոլեղնութենէն են բռնուած , այս ախուր ու խղճալի հետե-
ւակները , խաթարելով իրենց իմացականութիւնը՝ բուն ու ամուր ճի-
գի մը երկունքին մէջ : Իրենց կարողութենէն և ուժէն վեր այս բռնա-
գործութեան տուայտանքին մէջ , կրկնուած իրենց ամուր իմացակա-
նութիւնով ու սնանկ միտքով , ջլատուած անկարողներ կը մնան անոնք
բնդունակ միայն արտադրելու ի՛նչ որ իրենց պղաղ , անհաւասարա-
կշիւով զերար հակասող , զիրար չհղժապցնող հակահոտանքներէ խաթար-
ուած միտքը կրնայ ծնցնել , մշտապա քառու մը խորէն , միլին ու
մուտլամած կեղեւանքներով խանձարուրուած : Ահա ի՛նչ որ միայն

Վ՛րլլայ իրենց արտադրութիւնը , և ի՛նչ որ ակամայ՝ չահագրգռօրէն՝ աւշադրութիւնները կը դարձնէ այդ կողմը : Եւ այն զրտականութիւնը՝ զոր կը փորձեն, մեծ սիրագործութիւն մը ըրած ըլլալու միամիտ հաճոյքով և նորութեան մը հայրութեան անախառ հաւատքով, կը դառնայ կ՛ըլլայ այլակերպ անհեթեթութիւն մը, մեծապէս ծաղրելի ու խեղկատակ : Եւ միակ աղաւէնը՝ որով կը սփոփուին անոնք , այդ այլանգրականութիւնը իրենց երեսին տրուած ատեն, ինքնախարէական հաւատք մըն է, այլապէս զուարճալի նոր հնարք մը՝ որուն մէջ՝ իրր նոր Պրոպագանդիստ՝ կը լուսացուն դուրս կ՛ելլեն, մաքրուած, սրբացած, և որով Վ՛որօրեն ինքզինքնին՝ խեղճ մօլորածները, խեղճ ու կրակ կերպով , հղորմելի սայթաքածները զրականութեան «Ձե՛ն հասկնար մեզ . ա՛յնչափ բարձր միաք ենք մեք»[1] կը վճռեն երանելիները, Աստուծոյ շնորհքին արժանի Այսոյէսով, անհեթեթանալու այդ ճիգը՝ մի՛շտ նորութեան անուշով՝ մեհամոլութեան ստատկութեան կը հասցնեն անոնք , իրարու ցոյց ընելով թէ՛ ո՛վ կրնայ աւելի՛ արտառօցը, աւելի՛ մթինը , աւելի՛ անհեթեթութիւն արտադրել : Այս եռանդով չէ՛ որ , աղջամաղջի գրականութեան այս ժառանգաւորներուն նախահայրերէն Խնորա երբ իր ներաշխարհը հրատարակելու վրայ էր, Դօկանճեան, ցոյց մը ընելու համար թէ՛ ինք աւելի՛ անհեթեթ բաներ կրնայ գրել, արտադրեց իր «Ժայռին Զուրբ»ն :

[1] «Ձերնա՛լ հասկցուելու» ?! Ինքնախոր ցնորքով ինքզինքը օրօրոյ այս մտառքով չէ՞ որ ներաշխարհի հեղինակ մեծամեծակ ու հանճարեղ գրագէտը վերջերս լրագրութիւնը հանդիսատես ըրաւ եզակի նոր ցուցանքութեան մը, զոր կարելի չէ անտեսել և որուն հանդէպ դժուար է գտել կոշտ ծիծաղ մը : Յօդուածներու յայտաւերքեան շարքով մը , երանելի մարդը ելաւ հասկցնել Թէ՛ Վնարան չէ՛ հասկցուած հասարակութեան ա՛յնպէս՝ ինչպէս արժանի է , և ընկալատի մը պատասխանելու զարմանալի պատրուակին տակ՝ աղո՛ր մը փառարանեց ինքզինքը, մինչև կիսատուածի դերեր ու դիրքեր առնելու աստիճան : Աս՝ ալ նոր երևոյթ է , որ միայն կրնայ բացատրուիլ իմացարկ մասնաւոր տրամոյրութեան մը մեկնութեամբ : Մարդուն մէկը հեղինակ մը կամ իր գործը կը դատէ այս կամ այն կերպով : Ենթական ստիպում է անպատճառ բացատրութիւն տալու , երկար-լուսի հասկցնելու համար Թէ՛ ինք անանկ չէ, այլ տարբեր բան մը : Եւ ի՛նչ ինքնաներկայացում . շահագրգռական է այդ ինքնադատութեան քարոզը, մինչև ի՛նչ եզակի ձիրքերու որ, Վ՛ուզէք ահա հոշակող ենձական : Օ՛հ, ամբարտաւանութիւն և յաւակնութիւնը մինչև ուրե՛ր կը տանի սա երանելի հեղինակը ներաշխարհին, որ անպատճառ կ՛ուզէ հարկադրել ընթերցողը որ զինքը ճանչնայ ի՛ր ուզած և հաւնած կերպովը, առանց անդրադառնալու Թէ՛ իր՝ անանկ փափաքելովը չէ՛ որ սխալ կրնայ արձնցնել ցանկացուած տպաւորութիւնը կամ համարումը, ալ զո՛րմն է որ պիտի՛ ծնցնէ արժանի գնահատումը : Եւ ի՛նչ զարմանալի միտմտութիւն սա «չհասկցուած ըլլալու» մտամոլորութիւնը, որմէ կը հաղածուն զրոյնքի ոմանք և որուն Վնարանով նախակարգուած հայրութիւնը՝ սերնդագործած ըլլալ կ՛երևայ այսօր՝ ուրիշ զաւակներ ալ : Եարանակ ականատես Խնորաի սիրերգուն Վնարանօրէն զաւարճալի շարժումներուն լրագրութեան մէջքի մը համեմատութիւն և անճառախորձեան չափաորութիւն կը մնորձենք : Արժանիք մը երբ կոսէ հեղինակին մէջ՛կը գնահատուի, անյիշեալ, ինք ուզէ կամ չուզէ՛ Պէտք չի կոյ ինքնահնչակ հակայի խրոխտ ու ամբարտաւան ձեւերով հրամայում լուսադատութեան :

Ե. Ա.

Եղածները չէին բաւեր, վերջերս նոր մըն ալ աւելցաւ թիւին վրայ այս երջանիկ մահկանացուներուն, թեւին տակ Մեծարկնցի, նուիրուած նորահաշակ դրականութիւնը մշակելու՝ բանդագուշանքին, անձովը Պրն. Վանթամ Թաթուրի մը Իրերագութական իրենց ուխտին միջոց հաւատարիմ, զայն առաջ քեր էին այս անգամ, պաշտպանելու համար իրենց Հաւատքի Հանգանակը, նոր բանաստեղծութիւնը, շատ մը պորտաւանդով—առանց ատոր չըլլա՛ր արդէն—հինին դէմ, և չա՛տ մըն ալ—ադ ալ պայման է—գեանամած խոնարհութիւններով, երկիւղած պաշտամունքներով, խաչակնքումներով, խնկարկումներով ու ներքոյներով՝ բազմինն առջեւ նոր արուեստի քուրմին, ինկելի չաստուածին—չէ՞ք կռահեր ինքնութիւնը—Պառնասի եթերալնակ ներշնչեալ նորարարառքերթողաչունչ պատգամածը՝ պանծալին ու մեծն Մեծարկնցին Ատենով իր Ծիածանը «Մասիս»ի Մատենագարան» ընկու և Մասիսի մէջ իրմէ քերթուածներ հրատարակած ըլլալու պարագայի մը առջեւ, հակասութեան վերագրում մը վանելու համար՝ կանխեք ըսելու թէ՛ Մեծարկնցը այսօր չենք ճանչնար գեղեցիկ խոստումներով Ծիածանի հեղինակը՝ որ Նոր Տաղերը փոխած է։ Ո՛չ ալ վերջերս խաղացուած դերակատարութեան մը վրայ խօսելու ասան, կ'ուզենք պաշտպանել—պէտք չունի արդէն—իր խմբակէն նշաւակուած հեղինակ մը՝ Պարսամեանը։ Ի՛նչ որ կը շահագործէ մեզ, վերջերս ծայր տուած խեղճատակութեան մը երևոյթն է, որով կ'ուզենք զբաղիլ, դրական տեսակէտներով անոր պարզած նշանակալից կարեւորութեանը համար լոկ և Սրբ. Ի՛նչ է եղածը։

Ատենէ մը իվեր, այս մարդիկը, պետերով, մանկաւիկներով ու արբանեակներով, միաբերան սկսած են փող մը հնչեցնել թէ՛ բանաստեղծութիւնը չկայանար սիրային տաղերու, ֆանթեզիադ պոետիկ տաղաչափութիւններու և թուցիկ թեթեւ երգերու մէջ. թէ անոր կոչումը բարձր է, թէ պէտք է վեհ ձգտումներ, տարբեր ներշնչումներ ունենայ իրեն աղբիւր և եւ այս հաւատքով՝ միահամուռ հալածանքի մըն են սկսած քերթութեան այն մշակներուն դէմ, որոնք իրենց հատկցածէն տարբեր բանաստեղծութիւն մը կը մշակեն։ Այս նպատակով, անոնք վտանգիվ մէջտեղ կը քեն իրենց ցնորքին ուխտադիր պարոն մը, որ կրնայ քանի մը խօսք քով—քովի դնել, նպատակաւոր, կազմակերպուած ու լոյ՛ր չարանենգ հարքներով յերկրուած պարսուանքի ճառ մը հիւսել, ամէնէն թունալից, ամէնէն քու և բանդարկիչ քաջութեանքով, ինչպէս չաղակրտս ու բամբասող կին մը կը խօսի՝ իր դրոյցունին վրայ, աներեւակայիլի խեղութիւններով, յաւելուածներով, չափազանցութիւններով։ Ամիկա ծրագիր մըն է, ուրիշին ունեցածը վար զարնելով իրենցը հանեցնելու հարք մը, արմկահարութեան փորձ մը՝ գրականութեան մէջ բանութեամբ իրենց տեղ ընտալու ճիգ մը։ Ունկնդրե՛նք

իրենց վայրկեան մը, և լսե՞նք թէ ի՞նչ կ'ըսեն, հասկնա՞նք թէ ի՞նչ կը
 ճառեն, օրինակի համար, նշաւակուած բանաստեղծի մը քննադատներ,
 վահրամ Թաթուլ մը մէկ կողմէն, և Գօլանճեան միւս անկիւնէն: Կը
 դատադարտեն իրենց զրիչին ենթական, ամբաստանելով զայն յանցան-
 քին մէջ՝ սիրային, թեթեւ, ներշնչուած, զգացումէ զուրկ քերթումներ
 միայն արտադրած ըլլալու: Այդ առիթով, չատ մըն ալ բան կը ճառեն
 բանաստեղծութեան կոչումին վրայ, լսելեայ՝ զգացնելով թէ՛ բանաս-
 տեղծութիւն մը որ կայ, ա՛ն ալ Մեծարենցինն է, միւսինն է, իրենցն է.
 —ամէ՛ն աղմուկ այս նոյառակին կը ձգտի արգէն: Յօգնելու ի՞նչ
 պէտք. չիակէ-չիառկ ալ կը՛ային ըսել: Շա՛տ ազէկ. ընդունի՛նք
 պահ մը լսող որ այս միահամուռ թմրիկատրութեան ճշմարտութիւնը:
 Գնահատելով զիրենք դժուո՛ր ձգող բանաստեղծութեան շէնքը, տեսնենք
 ի՞նչ կը դենն տեղը: Ի՛նչ մը համբերութիւն, և պիտի տեսնէք, երբ մէջ
 բերեմ եղական նմուշ մը՝ սրինդներով, տառիգով և տեսակ տեսակ
 նուագարաններով պանծացուած, փառարանուած և երկրպագուած բա-
 նաստեղծութիւնէն, ստիպուած յանձն առնելով զոճողութիւնը զայն
 ամբողջապէս արտադրելու: Ահաւասի՛կ. մտիկ ըրէք երկիւղածօրէն,
 և ջանացէք ընդհնարել երկնաթոռիչ սաւառնումը քերթողին հան-
 ճարին և վեհիմաստ կաթիլը անոր ուղեղի երկունքին: —

ԽՈՒՂ

Նոր պտեր է յիպուսնակք բուսէ,
 Որ կ'ընկղմէ, մէջն իր շառաղ անդռին,
 Կապոյցներով պահարուն կալ մանկունին՝
 Որ մարգին վրայ բուշիկի պէս կ'ոսոսէ:
 Թռչնիկի պէս կ'առնէ քերպին իր ուժգին,
 Կրկնայ ծաղիկ, կախուած անտա մէկ ոսէ,
 —Մասն անմանօր՝ արարչօրեան մը ձեռքին՝
 Որ համաշափ հայերն անոր կը շեշէ:

Շուր, կոռագիծ հայերն անոր կ'ըստին.
 Ո՛վ դաւնաւոր չափակցութիւն, ուր կուգան
 Թռչունին սրացն ու ջրվեժի մը վայրէջ:

Եւ անմանօր գրքի մը գեր անծայր էջ,
 Մարգն երկիւղած՝ ու լսնագոծ ու կանաչ՝
 Պանեց աղջկան հային դրոճմն անմանաչ:

ԴԱՂԱԸ

Շուրքի վարդին վրայ կ'առնէ բնդ միտքս քառ,
 Եւ հայուածին մեղուն սարփոս, եւ ի եւե.
 Օ՛հ, շարժում մը, որ բնանի ձեռք սար,
 Որ մեղրք սար բառին ծանօթ: Ու քերէ:

Ու փախըսեայ փափքում մը՝ մերք օսար
 Ու անսովոր ձայնի մ'ըլլար կ'ըսար՝ եւ
 Օ՛հ, հնչական լրտեսութեան, անվրքար
 Պայծառ բողբոջներ, մանկիկ բոցաքեր:

Բայց լրտեսիւն, շուրք-ծաղիկն է անմեկսար.
 Լրտեսիւն ալ չունի հնչիւնն անսովոր
 Կը քեւածէ լոկ անուշիկ բոցը՝ որ

Մեր մեզուսիր իր ասեւեմ կը խաչար,
Եւ հոգիին մէջ սուգեթով, հոգեթով
Կը բեւե բոցն՝ բոգմալի բաւր փութով:

ՄԻՅԱՐ ՄԵՏԱՐՆՆՅ

Բան մը հասկցա՞ք . ի՞նչ կ'ըսեն բանաստեղծութեան անունով երկնում լանտառեղծութեան այս երկու կղկղանքները, որմէ չեն ուզեր և չեն կրնար միաքերնին մաքրել լիժած զրիչներ : Ի՞նչ հասկցեր է արդեօք անոնցմէ՝ հեղինակը . կրնա՞յ բացատրել :

Ահա՛ բանաստեղծութիւնը, կը ձայնեն սակայն, չեշտակի մտաւր ցցուելով անոր վրայ կեդրոնացած : Եւ երբ բան մը հասկցած չլլալնիւր յայտնէք, ցնծութիւնը մեծ է, յաջողութիւնը ձեռք բերում է : Ձէ՞ որ չհասկցուելուն մէջ կը կայանայ ! ! արդէն վսեմութիւնը, արժէքը այդ քերթումածներուն : «Ձե՛ն հասկնար» :— Օ՛հ, անադորոյն չնականութիւնը այդ խղճալի դաճաճներուն :

Խորիմաստ բանաստեղծութեան առաջապահին՝ Մեծարենցի այդ հրաշալիքին ետքը, կ'ուզէ՞ք նոյն մղձաւանջին անձնատուր ու պոչապոն հետեւելի մը՝ Պրն. Թաթուլի մը միտքին պոռուլն ալ . —

Զարալ-բագով շողածոյ .
Եմեյ շուրջառով շուսեռու ,
Եպիսկոպոսն երկինք՝ շուս
Պատարագուր մ'ե մեամիտի

Ու սպասաւոր մը սերոր,
Մասալակաս՝ կու գայ ժուռ ,
Ու երեջսակներ, լոխած, լուռ,
Դեռ կ'աղօթեն արտառով :

Եւ կամ . —

Բացասեմ անդին, մամբուն վրայ բարակ,
Իրիկուսն ոսկի սեղանին դիմաց,
Քահանայ սօսին կ'ընէ պատարագ
Մոր շուրջառն ուսին, լոյսով տոգորում.

Ու ժամուր ծաղկանց խճին վրայ փափուկ
Ու ժամուր խոսին խճին վրայ որբուկ,
Ու ժամուր լիճին աղօթին մէջ քաց :
ՎԱՆՔԱՐ ԹԱԹՈՒԼ

Լեզուներնուդ ծայրը չի՞ դար ըսել. — «Ու ժամուր խեղքին մէջը . . .
փա . . . խուկ» . . .

Ի՞նչ են այս յիմարութիւնները, պարոններ, ա՞յս բանաստեղծութիւնն է՝ զոր կ'ուզէք՝ չորս կողմ ըլլալով և պոռուտուելով՝ դնել ձեր քանդածին տեղը : Ասիկա բանաստեղծութիւնն է՛ : Ասոր ուրիշ անուն մը կու տան թող ձեզ անհանգիստ ընող բոլոր բանաստեղծութիւնները, իրենց բոլոր թերութիւններով, բոլոր տկարութիւններով մեան, բայց այդ մասխառկութիւնները մի՛ ջանաք մոցնել մեր դրականութեան մէջ : Պէտք չունի մեր բանաստեղծութիւնը այդ խայտառակ պատուատախ, արդիւնք հիւանդ միտքերու . դաւանցական բանդապուշանքներուն :

Աւանց կատարածի, այս ջանքը՝ զոր կը նկրտին ընել մէկ քանիներ, արդիւնքն է մատուցական կաշտ թեան ախտա՝ իշի մը : Եւ իրենց սարքած միաբերան յորձակուածը՝ նորատակաւոր, համախորհուրդ ու կազմակերպուած հնարք մըն է, որուն շարժառիթը և նպատակը անձանօթ չեն մնար : Հակահոտանք մը ստեղծելու ճիւղ մըն է ան, տեղ բանալու համար իրենց ոտքին : Այդ վարձը փնտաւորներ ու չարագէտ է սակայն մեր բանաստեղծութեան համար : Որովհետեւ, հիմակուրէն այդ ձգտումը սկսած է իր պատգնները ցոյց տալ, նոր հետեւակներ ստեղծելով : Եւ երբ շարունակական բլրայ ան, կը դուշակէ՞ք հետեւանքը : Այս մոլար ուղղութեան անձնատուութիւնով ու կոյր հետեւակութիւնով չէ՞ որ քանի մը քերթուածներ հաղիւ ստորագրող նոր բանաստեղծ մը՝ վերջերս հրատարակեց սա՛ ստանաւորը . —

ՀԱՄԱՌՅՐԸ ՅԵՏԻՆ . . .

Երազներու պէս խումբերով գոցի՛ն ,
Վերադարձներու յոսէն բարսիւն ,
Տեսա՛յ ես անոնց արցունքի լոյսն
Քիւներուն՝ ճակէն, տուներէն՝ նեղուց . . . :

Ես էն աղբուրին կուրծքին բարսիւն
Լացով քայեցի համբոյրքդ յե՛տն .
«Ուրի՛շ, նեղաւո՛ւր, սա՛ք երկինքներուն
Չդիմացա՛ւ, լուս բոցնեցա՛ւ», քսի՛ն :

Համբոյրք յե՛տն, Երդուխդ՝ տեսա՛մ
Տաքյա՛մ ու անո՛յս վերադարձներուն
Հոգիս յոգնեցա՛ւ՝ սպասելէն քա՛ն :

Աղբուր ծիծեռնակ, ա՛լ ինձի դարձուր
Մեռելի ծաղիկ՝ համբոյրին մահուր .
Ես պիտի պահեն, քայեմ քա՛նքախուր . . .

ՎԱՀԱՆ ԻՍՊԻՐԵԱՆ

Ի՞նչ կ'ըսէ այս ստանաւորը : Ո՞վ են անոր մէջ «գացող»ները, գիտողները : Ո՞վ ինչ կը հասկնայ անիկ : Ես պիտի փափաքէի այդ տաղերուն և «Կապը»ի, «Մուլը»ի հեղինակները քովս նստեցնել և հարցնել թէ ի՞նչ ըսել կ'ուզեն : Իրենք հասկցած ևն արդեօք ըսածնին : Կը հաստատան նաեւ որ հասկցնել կրցած բլրան միաքերնին անոնց՝ որոնց կ'ուզեն իրենց տողերը : Եթէ ոչ՝ ընթերցողն է յանդատոր որ չէ՞ կրցած հասկնալ, թէ իրենք՝ որ չեն կրցած արտայայտել : Բանաստեղծութեան մէջ, բարձր, վեհիմաստ, խորին ըլլալու համար՝ պէտք է անպատճառ անհասկնալի՞ բլրալ, մառախլապատ, ալանդա՞կ ըլլալ : Զօհրապ, Սիւսիլ, Յարութիւնեան և զեւ ա՛յնչափ ուրիշներ՝ իրենց բանաստեղծական սիրուն էջերով՝ ընթերցողը հիացնելու համար այս ալանդակու-

թիւններուն պէտք ունեցած են : Չէ՛, առիկա ինքզինքին տէրը չըլլալը
 ըսել է և անգէլ դադարաւոր չի՛ տար միտքի մը հաստաբաղչուութեանը
 վրայ : Ինքզինքը չկրնալ հասկնել , չկրնալ արտայայտել , կամ՝ բռնազ-
 բօսիկ կերպով՝ ընթերցողը ազնկցնելու համար՝ արտառոցութիւններու
 դիմում ընել , խենդ . ու խելառ բառեր կուտակել քօվէ-քօվ , Գաղափարի
 ու Նիւթի պակասը պարտկելու դիտումով , արուեստագէտին մեծագոյն
 յանցանքն է : Եւ խիտղէս , ինչի՞ ծառայած են այդ գեղեցիկ բառե-
 բուն այլընդայլոյ , անկատակից ու բռնազբօսիկ չեղջակուտակումները ,
 բայց եթէ՝ անոնց շողշողուն տեսքով միտքը չլայնելով՝ մօռցնել տալու
 Նիւթի ու Գաղափարի այն բացարձակ պակասը , որուն զոհն են յայտնա-
 պէս այդ բանաստեղծութեան մշակները և որ իրենց էական տկարու-
 կրնար ունեցած ըլլալ երբեք՝ պաշտպանել փորձել այս օրեր նշաւակու-
 մի առարկայ եզոզ բանաստեղծ մը՝ որուն վրայ թախած են ամէն կող-
 մէ , իր նոր մէկ հրատարակութեանը տուիթով : Ո՛չ մէկ նկատում կրնայ
 դրդած ըլլալ զիս այդ նպատակին : Ինչ որ երկարօրէն զբաղիլ կը մղէր
 զիս այս հարցով՝ Նիւթին ունեցած բարձր կարեւորութիւնն էր , մեր
 բանաստեղծութեան կեանքի դոյութեանը տեսակէտով : Վաղը , ապահո-
 վաբար , զրական խմբակին ուխտին երդուեալները , երկար խորհրդա-
 ծութիւններէ ու համախոհ կերպով ծրարուած խորհրդակցութիւններէ
 ետքը , իրենցմէ մէկը առաջ կը քչեն , նորեկ մօմակալ մը , պաշտպա-
 նողական ճառով ճառ մը կարդալու համար իրենց ազանդին վայ , ո՛վ
 գիտէ ի՞նչ լիզուանիութիւններով ու սրամտութիւններով , կանխապա-
 րաստ և թեկադրուած , պատրաստի՛ց կտմ յանպատրաստից , ինքնաներ-
 շնչումով կամ ալլաներշնչումով :

Ինչ որ ալ ուզեն փորձել , իրենց գործը ու շարժումը չզաղբիր
 հոգմադայներու զէմ ունայն պայքար մը մղող Տօն-Ֆիլօթական ցու-
 ցանքութիւն մը ըլլալէ : Եւ իրենք , բրջափ տտեն որ շարունակեն կառ-
 չած ֆիալ իրենց զրական կարծեցեալ նորոգիչի գերին , չեն կրնար զի-
 րենք գիտողներուն ծիծաղը զրգռելէ զերծանիլ : Այդ գերին մէջ , իրա-
 ւունքով չէ՞ առ իրենց անունը :

— « Գապօթեմ » ներ . . .

ԵՆՈՎԻՐ ԱՐՄԷՆ

Մասիսի բազմաթիւ րեքերցողները վստահ ենք թէ՝ մեծ հանդիմով պիտի ողջունեն հրաւ-
րակումը վաղափնո ամման բանասեղծին Պետրոս Դուրեանի պատկերին , զոր րե-
քերցողներ մինչեւ հիմա ո՛չ մէկ քերթի մէջ առիթը ունեցած են տեսնելու , ինչ որ աւե-
լի ճանեկան կը դարձնէ անոր երեսումը , կերպարանելով աշխուռ առջև , տեսք ու
դէմք այն հորդալի՜ն՝ որ ամբողջ սերունդի մըն է խօսած իր տաղերով , ա՛յնչափ
սիրտ լուզած , եւ որ մարմնաւոր արտայայտութիւնով ալ կը յաւերժանայ այսպէս , միս-
կերու մէջ , իր մասնէն իսկեր անձամբ մնալէ ետք իր դէմովը : Այ՛ հիմա՛ , «Սկիսարի
Սոխակը»՝ կրնայ իր դարբանին մէջ անխռով հանգչած՝ չմխալ՛ք .—


Իսկ անճօան հրէ մնայ

Օրհրի մէկ խորհն հողակոյսն իմ

Եւ յիօսատկա ալ քառամի

Ա՛ն , այն ասէն ես կը մեռնիմ :

ԻՒՍԿԻՒՏԱՐԻ ՍՈՒԱԿԸ



Ո՛չ , հասարակ պատկեր մը չէ՛ Դուր-
եանինը , անիկա աւելի՛ վե՛պալուսային
ճաճանչ մըն է աղբանշոյլ՝ որուն վրայ
մարդ սիրանքով պիտի սիրէր պէշուլ :
Քառամիտը տարին կը մօտենայ այն
ճաճանչին հորիզոնն իսկալ խորասուզ-
ուելէն , անհետանալէն իսկեր , ու մենք
ի զո՛ւր մեր ակնարկը շարժերինս ժու-
սածելով՝ զա՛յն կ'որոնենք վերատին :

Միթէ կը քաղուի՞ ճառագայթը :

Բայց նոր սերունդը խորին կարօ՛ւն
ունէր «Լոյսէ Նկար»ը տեսնելու այդ
ճառագայթին , հող չէ Թէ ֆարդունի
վրայ : Ու մեծանուն քերթողին յիշա-
տակը պանծացունել ուզող համեստ գրիչ
մը նախաձեռնարկ եղած տարիներ առաջ
լուստնկար մը մէջտեղ հանելու : Անոր
հարազատներուն ու դպրոցի ընկերնե-
րուն դիմեց . ճակտին պատկերը մէկէն
փոխ առաւ , աչքերուն անբջային ձուա-
ձեւը՝ միտն . և երբ ուրուագիծ մը
այն ինչ կերպարանուած՝ մօրկանը ներ-

կայացուեցու , արցունքներ խխու՛մ ըրին Թողմի՛ այդ կտորը . — «Պետրոսի՛կա է . . . »
ձայներ էր ան՝ հեծկլաւ քնելու մէջ : Պատկերը արուեստական կամ ոչ՝ տաղերը մնացին ու
պիտի մնան սակայն անարուեստ ներշնչումի Սողմոս մը , տարփանքներու հողեցունց Նարեկ-
մը , լոյն պաշտամներու և տուայտանքի արտասուայե՛ղջ Հանգանակ մը . . . : Քնարերգու
Դաւիթն է կարծես որ դարերու մէջէն վերկենցաղած ու երիտասարդացած՝ իր Եհովային կ'ա-
ղաղակէ կողկողակին .

Խո՛ն հսկայ փռէ՛ հիւլէիս :

Ատոր համա՛ր էր որ տասնընից տարի առաջ Դուբնայի կենդանագիրը ճրտապալի
 ձևով առնէ , անոր տողերէն արբշխ շուրթեր հծծեցին մեկուսի . — Ճիշտն ապտկերէն
 աւելի վայելուչ չէ՞ր ըլլար Տրսուեջին կամ Լճակին բնագիրն ունենալ , սե շրջանակել
 զայն ու կախել սալօններու մէջ» : Սակայն եւ այնպէս , ամէն ինչ որ « Իսկիստարի Սո-
 խակի » մնացած յիշատակի նշխար մըն է , խնկելի ու պաշտելի՛ է մեզ համար : Ճշմարիտ
 յուզումով մը պիտի նայինք նորէն այս պատկերին՝ զոր անո իր դամբանի դանդիակէն զուր՝
 հանել ուզեց Ենովք Արմէն : Անոր հոգուն աղօ՞ծք մը , հայր-մե՞ր մթմթալ կ'ազէք , ո՛վ
 զուր որ իր բանաստեղծութիւնները լսիւմ , անգիր հանում , զո՞ց ըրած էք . ելէ՛ք ողել
 նորէն « Իմ մահը » , որպէս զի չի քառամի իր յիշատակը :

Պաղլար-Պաշի , գերեզմաննոցին պատին քով , կտակների մը ճիւղերով հովանաւոր՝ իր կու-
 ճէ մահարձանը կը ցցուի , սպիկիկ , սրացիկ ու պարզ , հրեշտակներէ տաշուած սառնակոյ-
 տի մը պէս , պողած , քար կտրած անուրջի մը պէս : Եւ ամէն անգամ որ — մեռելի կա՛մ
 Մեռելոցի մը առի՞ծով — մենաւոր զիրմաստանին դռները բացուին , պիտի զանէք իր
 դամբարանին շուրջ քանի մը պատանիներ՝ ցուրտ մարմարը հիսխա՛նոյ համբուրոյ , իրբե
 թէ սուրբի մը տապանն ըլլար անորը : Ձե՞՞ մի որ « այն սուրբ կրակը զոր Դուբնայն ունէր ,
 սուրբէ՛րն անգամ չունէին » : Եւ յետոյ , մահարձանին պատուանդանն ու վերնամասի բուրձը
 կազմող վիմաղէն երկու հատորները — [զոր չորս զանգեր իրարմէ բաց կը պահէ] — իրբե
 թէ Թուղթի ճերմակ էջեր ըլլային , լեցուն են շատ անգամ մատաւորով նիշուած քառեակներով
 եւ արձակի քրդուցներով : Համտող հմն վաղցունել ուզած է իր մորմոքանքն ու իր պաշտու-
 մը : Նայիս , անձրեւները կու գան : կը լիզեն կը սրբեն յիշատակի այդ սե խարանները ,
 ու շատ չանցնիր՝ կուծերուն քառեակ այտերուն վրայ մատիտի նո՛յն գծածանքները կը վխտան
 նորէն , մրջիւններու գորշ կարաւանի մը պէս չորս զին տարտղնուած :

. . . Դեռ շա՛տ տարիներ պիտի գան ափ առնել դռնակը քու մենաստանիդ , « հէ՛ք
 տղայ » , որ կեանքի իրաւունքներէն ա՛յնքան կանուխ վնասուած մըն էիր , որ սիրեցիր՝ եր-
 գել քու Թախտագին մրմունջներդ ու արցունքներդ , որչափ տունն որ կառուցդ բաց էր եւ եր-
 կինք՝ ամառուն : Դո՛ւն որ , — դեռ Դերեզման չիլած , — խմած էիր « անյուսումիւն » ,
 Անոր այդ « սե կամ » ը ե յափրացած անկէ , խմէ՛ , խմէ՛ վերստին մեր բոլորին հիացումնե-
 ռուն նեկտարը զինեփրփուր , փախիղ անա՛յգ խորութիւններէն . . . :

ԹԷՌԳՐԻ



ՔԼԱՐԱ ՇՈՒՄԱՆ



ՔԱՌՄԷՆ ՍԻԼՎԱ

ՌՈՒՄԱՆԻԱԻ ԳՐԱԳԻՏ ԹԱԳՈՒՀԻՆ

Քաղաքում ըլլալու զգայութիւնը ունիմ : Առաջին նուագահանդէս . . .

Հիմա , կը մտնանք հանգիստեաներով լեցուն մեծ սրահին մէջ : Մէկը չը տեսայ հոն , որովհետեւ միմայն բեմին և դաշնակին կը նայէին : Դէպի աջակողմը այնչափ հեռուն նստած էինք մենք որ՝ դաշնակին պոչէն ուրիշ բան չի տեսնայի, եթէ մայրս թոյլատրած չըլլար ինծի որ երթամ նստիմ առաջին երկու կորդերուն մէջտեղը , ուրկէ կրնայի ստեղծաշարը տեսնալ :

Աչք և զոզահար ջղայնութիւն կարած էի համակ : Ան կը մտնայ ներս և եռանդուն թափով մը դաշնակին գլուխը կ'անցնի : Հագած էր սև թաւիչէ չրջազգեստ մը , սև վարսակոյտը պարզօրէն վեր առնուած , ակամջներուն վրայ չը ձգուած բնաւ , ինչպէս էր այն ատենի նորաձեւութիւնը , բայց քիչ մը թանձր , կուռ ու դանդուրած , և դարձաբարձր մեթ կարսիւր միակ վարդով մը , որ ականջէն քիչ մը վար տեղաւորուած էր : Իր ամբողջ անձին վրայ անանկ ներդաշնակ բան մը կար որ , ապաւորութիւնը ունեցայ թէ իր չրջազգեստն ալ այնչափ

Ու թը տարու էի , երբ առաջին անգամ լսեցի զայն : Պօն քաղաքին մէջ տեղի ունեցաւ այդ մանր , իմ առաջին նուագահանդէսիս իսկ ատեն : Ամբողջ օրը այնչափ ջղային էի որ , չեմ գիտեր թէ ինչպէս զիշեր կըլաւ : Կեանքիս մէջ քիչ անգամ տեսած եմ օր մը որ ան օրուան չափ երկայն ըլլար ու անվերջանալի : Վերջապէս ժամանակը հասաւ : Աղւոր ու ծաղկատի մայրս , հագիւ քսանընթր տարու դեռ , որ այն ատենէն իվեր և երկար տարիներու համար , թաւալուն բազկաթոսին ու սաստիկ տառապանքներու էր դատապարտուած , սխալի կերպով գլխատաւորուեցաւ և տարուեցաւ նուագահանդէսին սրահը : Ալ չեմ յիշեր թէ ա՛ր որ քովէն կը քալէի՞ կոր ես , ինչու որ աւելի թռած քան թէ

կարմիր էր որչափ ծաղկեր : Ձեռքերը պղտիկ էին , զօրեղ ու թօթօշիկ , և զարնուածքը՝ կուռ , կորովի , աւողջ , գրեթէ առնացի : Այդ զարնուածքը յաւէտ կը մնայ ականջներուս մէջ . բայց ինչ որ սիրաւի մէջ կը մնայ , իր նայուածքն է :

Քիչ մը ծոած , մօտենալով ստեղծաշարին , իւր թէ ուզէր աւելի լաւ լսել զայն և մարդոցմէ հեռու՝ միամիտակ ըլլալ իր գաշնակին հետ , բնաւ չէր նայեր չորս գին , բայց ես տեսայ զմայլելի ու մահու չափ արատում աչքերը : Ա՛լ չէի կրնար ունկնդրել , այդ այնչափ ահաւիրօրէն տխուր աչքերուն պատճառով և ինքնիրենս կը հարցնէի թէ ի՞նչպէս մարդ կրնար այդ սառիճան տխուր ըլլալ , երբ երջանկութիւնը ունէր այնքան հրաշալիօրէն զաշնակահարելու :

Այն ատեն ոչ ոք ըսաւ ինծի թէ , իր ամուսինը մտային հիւանդութիւն մը ունէր և ինք կը սնուցանէր իր առողջ զաւակները , իր առողջ մատներովը : Ձէի խորհեր որ ան կրնար աղքատ ըլլալ , ինչու որ թաւիչէ շրջադէպտ մը կը կրէր : Նմանապէս չէի կրնար միտքէս անցնել որ ան կրնար արուեստագէտ ու աղքատ ըլլալ միեւնոյն ատեն : Կ'երեւտկայէի որ արուեստագէտ մը միլիոններ կ'ունենայ չալալիւռ : Այդ տարիքին մէջ , իրականութիւնը հէքեաթ մըն է և հէքեաթ իրաւանութիւն : Ռօպէնսօն ես կամ Ալատէն և աւելի յաճախ Ռօպէնսօն քան թէ Ալատէն : Տակաւին անդգայ կ'ըլլատ այս աշխարհիս գանձերուն հանդէպ . բայց իմ սիրտս չատ զգայուն էր տխուր աչքերու նկատմամբ , որովհետեւ պէտք եղածէն աւելի կը ճանչնայի տխրութիւնը ու վիշտը :

Մայրս գամուած էր թաւալուն բաղկաթոսին . պղտիկ եղբայրս ալ մարտիրոս մըն էր ցաւերու և հայրս հիւժախտաւոր էր : Այդչափ ցաւեր կը բանան աղոց աչքերը , ուրիշներուն ալ ցաւերուն համար : Բայց , որովհետեւ երազող աղեկ մըն էի եւ լոկ և ոչ անխորհրդապահ մը , ինքզինքիս պահեցի իմ տպաւորութիւններս և Քլարաի եղերական ճակատագիրէն ոչինչ գիտցայ :

Անկէ ետքը մէյ մըն ալ Սէն-Բեթերապուրկի մէջ տեսայ զայն , քսան տարեկանիս : Նոր ելած էի ժամտատնոցի հիւանդութենէս եւ այնչափ տկար էի դեռ որ՝ հազիւ կրնայի կենալ սրունքներուս վրայ : Հօրս մահուան տխուր լուրը եկած էր : Ահաւիրօրէն սրտաբեկ եղած էի և կը խորհէի որ ապրելու հրճուածքը վերջնապէս դադրած էր ինծի համար զոյութիւն ունենալէ :

Այդ պահուն էր որ Քլարա Ծուսան Սէն Բեթերապուրկ եկաւ իր Մարի աղջկանը հետ : Էլէն մեծ-դքսուհին , արուեստագէտներու պաշտպանը ու սրտանց բարեկամուհին , անմիջապէս իր աղաթանքը անոր տրամադրութեան տակ զրաւ ընակութեան համար : Անկարագրելի հրճուածք

զգացի, երբ ան եկաւ և եօթը չարաթի չարի բնակեցաւ ճիշդ իմ յարկին վրան : Իր նեղակայութիւնը մեծ մխրթնարութիւն մը եղաւ ինծի : Կանխաւ ինծի լուր կու տար, երբ դաշնակի փորձեր ընէր . այն ատեն կը քշքշուէի մինչև իր մօտը . կը կճկուէի քիչ մը հեռաւոր անկիւն մը և դրեթէ առանց չունչ առնել տալու մտիկ կ'ընէի :

Շատ չանցած մեծ-դքսուհին դասեր առնել տուաւ ինծի Քլարաէն և այդ դասերը խիստ պատուական եղան : Դեռ չառ տկար էի աղէկ դարձելու համար . բայց ան՝ Շուսանէն աղու կտորներ դառաւ բերաւ ինծի, որոնց կը բաւէին ուժերս և այդպէսով է որ սկսան այդ դասերը, որոնք այնչափ մեծ կարեւորութիւն մը պիտի ունենային ինծի համար, ինչու որ այդ հիանալի ու պատկաւելի կինը իմ վիշտիս իրը լաւագոյն մխրթնարութիւն չը դառաւ ուրիշ բան, բայց եթէ ինծի պատմել իր իսկ կեանքը : Եւ ես ամէլայ դժբաղդ երեւալուս համար, այն տեսակ ցաւերու հանգչող զորոնք կեանքը կրնայ հայթայթել :

Ահա իր պատմութիւնը .

« Հայրս ու մայրս ամուսնալուծուած էին : Ես խանդաղին կը սիրէի մայրս : Հայրս վերամուսնացած էր և մօրուս լաւ չէր ինծի հետ : Տասնըորս տարեկան էի, երբ Շուսան եկաւ մեր տունը, առաջին անգամ : Իրարու սիրահարեցանք և դադարապէս նշանուեցանք : Ան տասնըութը տարու էր և ես՝ ինչպէս ըսի, տասնըորս : Այդ մասին ոչինչ ըսինք խոստաւորոյ հօրս, ինչու որ ան տարբեր ծրագրերն ունէր իմ մասին » :

Երթունքներուն վրայ նուրբ ժպիտ մը կը խաղար և աչքերը կը փայլէին երբ կը խօսէր իր երկրասարդութեան սէրին վրայ .

« Երբ տառապանքս քսաներկու տարեկան եղաւ և ես տասնըութը, հօրս և անոր մէջակող կայնած, դատաւորին ներկայացայ : Շուսան ապացուցած էր թէ չափահաս եղած է և կատարելապէս կարող է ընտանիք մը ապրեցնելու : Բայց հայրս պատասխանած էր անոր, նամակով մը՝ որուն մէջ տասնըութը նախատինք կային . ես ատոր համար էր որ նշանածս դատարանի առջև քաջած էր զինքը : Այդպէսով է որ անոնց երկուքին միջեւ կը զոնուէի դատաւորին առջև, որ նշանածիս պատկանելու իրաւունքս հաստատեց :

« Հայրս սաստիկ զայրացած էր . միշտ ըսած էր .

«—Աղջիկս պէտք չէ որ հասարակ երեսփոխի մը հետ ամուսնանայ : Կոմս մը կամ մարի մը իսկ քիչ են անոր համար :

«Զիս վախեց տունէն, առանց հագուստի և առանց ճերմակեղէնի : Մօրուս մտախ հանեց պղախկ մասնի մը՝ որ մօրս յիշատակն էր և իր աղջկանը տուաւ զայն : Այդպէս անա ժառանգութիւնէ զրկուեցայ : Որով մեկնեցայ ամուսնին հետ. բայց ատոր փոխարէն, երկինքը ունեցանք մեր արամադրութեան տակ, տասը տարիներ, երկնային կեանքը, երկնային վայելքը :

«Ձաւակները շուտով եկան : Նախ չը նշմարեցինք բնաւ որ մեր անդրանիկը միւսներուն պէս չէր , մինչեւ այն օրը որ այս վերջինները մեծցան : Մեծ ցաւ մըն էր մեզի համար անանալ որ ան երբեք կարող պիտի չըլլար իր հայրը շահելու : Բայց մենք այնչափ երջանիկ էինք որ այդ ցաւը իսկ չէր կրնար միտպնել մեր երկինքը : Գալով հօրս , իր խօսքը չը լսեցի ալ բնաւ : անոր համար մնում էի ես անշուշտ :

«Ես ամուսնինս համար միայն կ'ապրէի : Կը հետեւէի անոր միտքին ամէն մէկ շարժումին , անանկ որ այն օրը՝ որ անոր իմացակա- նութիւնը սկսաւ խանդարիլ , կարծեցի թէ ես ալ անոր պէս խնդկեա- լու վրայ էի : Կ'ուզէի հետեւիլ անոր , իր կեանքին այդ նոր փուլին մէջ եւ չէի հասկնար թէ ո՞ր կ'առաջնորդէր զիս : Այս իմ աստուածս էր»:

ԴԱՌԻՆ ՍԷՎԱՆԻ

[Յաջորդով]

ԶԻՖԹԷ-ՍԱՐԱՖ.



Յ. ԱԼԻՔՍԱՆԵԱՆ

[Հակառակորդի իր դերերով Ժակոբ Կալանդարեանի դերակրանք
Օսմ. Թատրոնի Բեմին]

Իր պատիւին երկի գիշեր Բերս քաղաքում ներկայացումս աւիրով

ՀԱՆՁՆՈՐ ԴԷՄՔԵՐ

ՎԵՆԵՐԻՍ

— « Հանչուր Դեմք, ո՞վ, Վենի՞սը, կայնե նայի՞նք, երեկ մեկ, այսօր երկուս [1] : »

Ապահովապես այսպես պիտի բացազանչեն ներկայ գրանկարիս վրայ աչք մը քարթողները, միտք բերելով որ հագլու հա՛նի մը յօղուած ցանցնա՞ծ է ան մեր քերթերուն մեջ :

Եւ իրաւունք ունին անոնք իրենց դաս ստանին մեջ . մարդս երկու յօղուածով գրադէս չի դառնար, իրաւ. բայց կը խոստանա՞յ գոնէ : Պատահա՞նք ունիմ հաւատալու որ Վենիսը խոստացող գրիչ մը ունի եւ . . . յօսնացող քուիչ մը, — այս վերջինը գէթ ծածկանուկէն մակաբերելով : Քսան սարիէ ի վեր խմբագրական շեմքը մաշեցունող ի՞նչ գրողներ ունինք առի՞ն, որոնց գրուածով յայտնաւորենք կարելի եր ձեւացունել անոնք պիտի մնան դեռ հաւատարիմ «կեն-ո-կօ, կեն-օ-կօ» իրենց ցամաք-հա՛ց վարդապետութեան, ներշնչումէ զուրկ եւ իսկապաւութենէ սնանկ, մոռումը գրականութիւնն նկատելով եւ յօղուածներու շեղջակոյսը՝ փառքի կոթող : Առի՞ն, նայիս՝ նորեկ մը կ'ելլայ հրապարակ ու պարբերիկ գրուածով մը յայտնութիւն մը կ'ըլլայ աղկաղկ գծողակներու վսիմակին մէջ : Օրինակով մը բացատրեմ միտքս : Փանի մը ամիս չընէր դեռ, Միմբեան մեզի տուած մեկ այցելութեանը՝ սխալմով կը յիշէր փոքրիկ փերուած մը մեր հանդէսներէն մեկուն մեջ այն ինչ կարդացած :

— * * * Ի՞նչ, կը ձայնեմ անոր, այդ փերուածը միտք բերելով նոյն-հետեան : Չեմ սխալած : Բա՛ն կրկին կը կարդանք այդ գոհար բանաստեղծութիւնը, պոէզի նեմարիս հոգի մը ողջունելով անոր անցնիւր տղեւուն մեջ :

. . . Բայց մենք Վենի՞սը պիտի գրենք իրաւ, սա մեր պիտաւոր Ափրոդիսէն, կամ, բողբուկաւոր Արուսեակը, ո՛րք որ կ'ուզեք [2] :

Անկեալ գրականութենէն ներս իր մուտքը գործած է քարգմանութիւնով մը : Կը շամբրեմ այս բառը, ցոյց տալու համար վերջէն քա՛նու-թիւնը չարանճի այդ եղանակին : «Երանի միտքով աղիտներուն» խորագիրը կը կրէր ան : Չեմ յուսար որ յիշեմ հիմա, բայց քա՛ն գիտեմ քեզայն հիւրընկալող աղաքերքին մարդիկը, — խմբագրապետէն սկսե մինչեւ սրբագրիչ, — չեն մոռցած «Երմաներէն» այդ «քարգմանութիւն»ը, վասն զի կեանքներուն մեջ զուգե երբեք զոն գացած չըլլային այդպիսի հնարամիտ եւ իսկապաւ գիւտի մը : Երմաներէն, քարգմանութիւն,

[1] Ապահովաբար «Վենիս» ինք ալ կանխաճառ նկատէ «Հանչուր Դեմք» հռչակուելու այն շնորհը՝ որուն կ'արժանանէ զինքը Թէոդիկ, թէեւ ուրիշ հայեացքով մը, Խմբ. Դիս.

[2] Venus գեղեցկութեան դիցանոյշին անունն ըլլալէ զատ, է նաեւ անունը Թանճրապատեան անդուխտ կաղաքագործի մը [lamellibranche] ծովային :

ասանկ բաներ իրականութեան մէջ գոյութիւն չունին. ինչ որ գոյութիւն ունէր՝ ան ալ մարդկային տիպարն էր, որ ուրուագծուած էր հոն ծաղրանկարի մեռելով մը առաջադրեցած: Շուտիկ կը հասներ տաք տաքին ինչուան խմբագրատուն, գրասենեակներու մէջ, շոգեմար, վերջապէս ամէն ո՛ւր որ փաստուս անձե՛ր՝ գրողին ու ենթակային ծանօթ՝ արծարծել կ'ուզէին խնդիրը, թէ ու դեմ ասուլիսներու դուռ բանալու համար: Այգաբերքը ձայնի՛կը չի կրցաւ հանել. հերժուլ գրե՛ր՝ մէկ տեսակ. «քարգմանիչ»? Վեհիւար դիմակագուրկ ընէ՛ր՝ մէկ տեսակ:

Մէկ երկու տարուան լուրքենէ վերջ, Վեհիւս — որ չարէ աւելի չարանքի մըն էր — նորէն կ'իջնար հրապարակ, միտ տնտեսաբանի ապրաւոր նշարակը ձեռքին մէջ: Ի՞նչ մեղմ պահեմ, անիրա՛ւ էր, — օրինակի համար, — երբ ելաւ «Համադրական»ի մէջ «Տօմինօ»ն ֆնաւփետել, անոր մէկ ոտամառորը միայն ունենալով նիւր, յանգի, հասածի, վանկի եւ չեմ գիտէր ինչի՛ մանրակրկիտ սխալացոյց մը՝ հեզմութիւններով լեցուն: Սխալ է այս ճամբան. գրողի մը վերլուծումը՝ անոր մէկ ֆերթուածովը միայն կատարել ներքի չէ: Զօհրապ արցունքոտ նորակերք գրած է, կեանքով քրքուն անմոռաց էջեր: Ելլէր մարդ զանոնք առա՛նց յիշելու՝ քանի մը շաբաթ առաջ *Լոյսի* մէջ հրատարակած ֆերթուածն անէր եւ անո՛վ չափեր մեծանուն վիպասանին կարողութիւնը, թե՛ւս որո՛ւ զաղափար մը չկարենար տալ անոր մասին:

Ի՞նչ ըսիք:

✱

Ինչպէս երազական գրականութեամբ, նոյնպէս ալ նոյն երաժշտութեամբ սնանք միտք, Վեհիւս չէր ուտանար գրանկարի մը նիւր ընել քիչ յետոյ *Vers le Passé*ի հեղինակը, *Մամուլի* էջերում: Զեռագիրը — չեմ գիտէր ի՞նչ դիտումով — ինձի խելեր էր: Վերջին, իրեն հանդիպելու:

— «Սանկ *retouche*ի մը համար... ֆերականական անճշդութիւններ որպէս զի ուղղեմ էրե կան...» կը պատասխանէ:

Ե՛ս, ա՛յդ գրուածքին: Ինձի կը փորձէր, չարանքին...: Զե՛, ստուակէտ մը իսկ չունեցունելէս զատ, ուղղակի փափաքած հապտիկ խելեցի, չի մոռնալով միայն *խոր* մը գրելու սնուհիին, իբր... գրչի եղբոր մը պայմանագրական ներկայ սցում: Տեսեմ թէ ի՞նչ նուրբ դարձուածքներով ենթական ուրուագծել ուզած էր նոյն յողուածին մէջ:

«Առէ՛լի տխրած կ'զգաս զիմք շտիմք՝ քան զիմք կարդալով, զսանգի այս վերջին պարագային՝ գրագետներու յատուկ *illusion d'optique*ն մը՝ Պիֆօնի ժանկաւոր քերանցը կը կարծէ անցընել, միմիկոս Thomas Diafoirusի վերաբերուն է հագածը...»:

Ուրիշ տեղ մը, Վեհիւս գարձեալ իր կծան ու կծուակիծ ֆնադատութենէն նմայե մը կուտայ մեղի, միտ տաղաքավար, ենթակային տուած հանկ տարին ո՛չ ցար զգացունելով եւ ոչ ալ նիւր. տեսեմ:

«Շօրեկն, Վեպերի կամ Մեկերջօրնի երաժշտական ձառագայքները — ներեցե՛ք քաջացուրեալսն—կը շեղին երբեմն Բաբելեանի interpretationեան անցնելով : Կը տեսնա՞ք Շօրեկն մը Բաբելեանի անկոցով դիտուած : Չեմ գիտեր քե Շօրեկն կը շահի՞՞ այս կերպարանափոխութենէն, յայց նիւթին հարազատութիւնը եւ անկեղծութիւնը շատ քան կը կորսնցնեն : Բնէ՛ր պիտի ուզէի քե virtuosozը յաշկանշող անանձնութիւնը կը կորստի երբեմն exécutionին շափութեան մէջ : Պէտք է ինչ Mozart մը , Beethoven մը double ջրլայ գայն քաջացորող արքայիկն հետ : Նուագողը պէտք է հեղինակին հետ նոյնանայ , յուզուի, անանձն ջրլայ :

Ահա օծիկն բռնելու ասեմն եկաւ սա Վեկիւսին : Պէտք է, այս , անանձն ջրլայ . միայն նուագողը . այլ եւ քննադատ մը պէտք է անանձն ջրլայ ամեն բանէ առաջ : Վեկիւս Plaisir du Printempsի հեղինակն երբ անցաւ «Ներաւսարհ»ը երկասիրողին, չեղո՞ք անանձնութիւնը քեւեւ կը ցաւ պահել . — չի մոռնալով միտք իր խայքնամեղ ակնարկութիւններուն կծիկը տեղ տեղ փակելու, — բայց վերջէն պաղարիւնը կորսնցուց՝ երբ «Կարծիքներ ու Կարծողներ»ը խրսուխակուած տեսաւ իր առաջ : Դեմ դիմաց անցնիւրը զարկաւ իր քմուկը — մին Բիզանդիոնով , միւսը Արեւելով , եւ քննադատութեան անանձնութիւնը շուտով տուաւ հրաժեշտ : Ո՞վ աւելի տուեց . ասիկա իրենց կը մնայ—այս օրերուս չե—օ՛ր մը խոստովանիլ , երբ միւս բերեն քե երկուսն ալ Հեբբիւշէ մը վար չի մնացին , [ստորագծած բառս իր ժողովրդական իմաստովն առնելով] : Երկուսէն ո՛չ ոք խելք քուս առաջարկելու այդ լեզուապայքարին մէջ.— «Passez-moi la rhubarbe, je vous passerai le séné» : Մեր գրողներո՞ւն ինչ կա՞ծ է ասանկ բան՝ գրավե՞նք գօտեպնդութեան ասեմն :

*

901 ի նունձեկն է Վեկիւս Պերպերեան Վարժարանի , արեւնէն հասկարուող , երբ ոչ հասակով , գոնէ զանկով : Իր աւարտական ճառը — «Ժամանակ» — կը յիշեմ որ շատ մը ունկնդիրներու կողմերուն վրայ ծանրութիւն մը աւելցուց , որովհետեւ ռսկեղարեան ոճով եր ու ներկաներուն բոլորն ալ ո՛չ Դուրգեհներ էին , ոչ ալ Վանանդացիներ : «Երիցագոյն կարգ» ին հրաժեշտ տուած տարին ճառ մըն ալ կարդաց այս տղան հրաւայի Ֆրանսերէնով մը եւ նիւթի եզակեան յրացումով մը որ . . . միւսիւս Լեւեմանին եր ապահովաբար : « Ռամսէս Բ. » ի մամիան է որ Լուվրի Մուսէոնին մէջ կը զարքնու ընդոս եւ աշուրները ճմուռելով՝ քաղաքակրթութեան յառաջդիմութիւնները կը քուէ մէկ նոթէն մէկալը : Մեծաշառայ ծափափումներ իր այտերը կարմրեցուցին աս ցորեկ : Ո՛րակից ուր պիտի միսէն անցունէր քե օրին մէկն ալ գրչի ապեր սաան ձաղկումներ պիտի գային նորէն շառագոյն ներկել նոյն այտերը : Է՛հ, քննադատողին՝ քննադատուին է բաժին :

— «Պայմանաւ որ երո՛րդ մը ըլլար քննադատը , չե՛ քե ենթական» քսին շատեր :

— «Ենթական ըլլար , հոգ չէ , պայմանաւ որ politesseի սահմանէն

չարսուդեր» կ'ըսէր Հազարապետեան Երուանդ [ա'յ յայտնենք անունը]
Պերպերեան վարժարանի առեւտրական գիտելիաց նորակարգ դասախօսը :

Ես իմ յանկերգս ունիմ նորէն :

— «Պայմանաւ որ անա՛նձն ըլլար քննադատուրիւնը»:

Արդեօք Ենթով Ի՛նչ կը խորհի այս մասին [3] :

ԹԻՆՈՒՒԿ.

[3] Սա կը խորհի որ Թէոդիկ ճիշդ կը խօսի , բայց այդ անժխտելի ճշմարտութիւնը որ-
չա՛րի հետու կը մնայ հասկնալի ըլլալէ շատերու , մասնաւորաբար իր ակնարկած Ենթա-
կաներէն մէկուն՝ «Ներսէսյան»ի պանծալի հեղինակին , որ իր ընդդիմաբանութեանը մէջ
«Վէնիսա՛ն առելի (շառագունեղ)ու բաժին ունեցաւ , իր խի՛ստ «անհոնձն» ! ? պերճախօ-
սութիւնով :

Ե.

ԶԼՋՈՒՄ

Երէկ գիօեր հեօսանքի պատարագէ մը վերջ յոյլ ,

Կը դիտէի յափրացած սրունքներուդ զիծը բոյլ ,

Կը դիտէի սեղանիդ իրերն ամէն ցիրուցան ,

Ժամեակ , սրուակ ու մեռած մազի խորձեր ալ դեղձան :

Սենեակը ցուրտ էր ու մութ , ձիւրսը հովն էր սրմասոյլ .

Նախիտմէս յոգնաբեկ՝ երազանքի մը մէջ ծոյլ՝

Զգացի որ սրտօրէն մաւծումներըս անձայն

Պահ մը ձիւնէ անդրիիդ ողորկ ձեւէն հեռացան :

Կը խորհէի քե ինչ որ մեզն Բնմահ Աւր կ'անուանենք ,

Մութ կիթեբու յագեցման պարզ հախարա՛նը չէ՞ր նեղ .

Ու զարդերէն մերկացուած Կիներ անարգ Էզը չէ՞ր . . . :

Այսօր դարձեալ ճեպոյ բեզ ու հակեցի իմ աչքեւ .

Ա՛յնքան վսեմ էիր դուք աստուածութեանդ մէջ օրփել ,

Ու ա՛յնքան վառ էի ես խորհուրդներու մէջ օրգեղ .

Երէկ գիօեր հանոյքի պատարագէ մը վերջ յոյլ . . . :

Ո՛. ՍՆԻՍԷ.

ԱԶՔԵՐԴ

Յօններուդ նուրբ բաղեղին՝ սակ բաւարժի
Աշներուդ զոյգ լինե՛րն է որ կը փռուին ,
Ուր նայուածքիդ յոյս հմայքը կը յածի ,—
Միտքի՛նքական քո չունենը ծովային :

Ինչ որ ունիս անձիդ վրայ կախարդող,
Այդ լինեալն մէջն են քափեր կամովին,
Վերադառնա՛մ գգուանքներդ իսկ հեռադող
Հիմալու ընէ անոնց մէջէն կ'զգացուին: A

ժպիտդ անոնց ա՛յգն է պայծառ եւ ցնձուն ,
Ու ճիւղաքիւնդ՝ վերջապսին պէս արձում;
Մօտեային շնո՛քեր կու տայ լինեալն,
Յօններուդ նուրբ բաղեղին՝ սակ ցողարում:

ՄԱՏՆԵՐԴ

Նրկարած ձնահոյ ե՛ս քաշէ , իմ հեռախայգ ձնո՛քերէս ,
Որովն կը զգան աշուցքը նրբախնդակ մասներուդ ,
Մասներդ որովն կը շողա՛ն քաշեալ թափ երակէդ ,
Զմեռուխս , յակինք, կաշկեհան , ամբողջ կայծե՛ր բոցանուս :

Ահ , չեմ ուզեր յիշել ես քնայա՛վար քայց անյազ
Ու կասկածոս սրտդի վերլուծումներդ անգորով .
Մասներդ սիրիս մէջ միտած կը բնե՛ւիր շարունակ ,
Մուր անկիւններդ անոր պրպշեղով ժամերով :

Մըք ալ յոգնած իմ սիրէս դուրս քաշեցիր ձնահոյ ամբիծ ,
Ապշուրիւնով դիտեցի եղունգներուդ բրնձար ,
Դառնալուսէ՛ ծայրերուն վաղդազոյնը խօլազիծ ,—
Սիրիս դեռ քաւմ աշխնին կարմիր հեճե՛րը բոլոր :

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԱՆ

ԸՐԱՅՆԻՍ ԲՃՇՊՈՒԹՅՈՒՆ Է

Բ.

Բայց բժիշկը ընդհանրապես այդ սկզբնական չրջաններուն չկան-
չուիր, որովհետեւ այդ ակտային առաջին փուլերուն մէջ յարձակում
կրող մարմինը երեւութապէս առողջութիւն մը կեղծելով, ենթական
տակաւին հիւանդ անունը առած չէ։ Այս զանցառութիւնով զործա-
րանաւորութիւնը ձեռքէ հանած կ'ըլլայ իր բնական միջոցներէն է'ն ան-
փոխարինելին, իր բուժիչ հակազդեցութիւնը, որ նախառնմանուած է
անկեալ առողջութիւնը վերականգնելու։ Միայն հիւանդութեան եր-
րորդ շրջանին է որ հիւանդը ալ ընկճուած, իր մարմնական ուժերուն
անդուր ըլլալը զգալով, կը հրաւիրէ բժիշկը և անոր հետ միջոցն
միջոցները՝ որոնք տպարդիւն կը մնան յաճախ, որովհետեւ զործը զործէն
անցած է և ակտաւարակ մարմինը ճարահատ, անձնատուր եղած է
յաղթական հիւանդութեան։ Այս պայմաններուն տակ՝ հէք հողաչէն
մարդ-մեքենան կամ ակտին բարեմոյն բնաւորութենէն օգտուելով իր
օժիքը կ'ազատէ և կամ բռնաւոր լուծին տակ ճնշուելով՝ անոր չիջու-
մէն առաջ ինք կը չիջի։ Առաջին պարագային, ինչպէս և վերջինին
մէջ, բժշկութեան ընելիքը գրեթէ յաճախ յարաբերաբար ապարդիւն
կամ անզոր օգնութիւններ ընձեռելէ անդին չանցնիր։ Եւ իբրեւ, ինչ
կրնայ ընել բժիշկը երկկամատապերու, լեարդատապերու վերջին շր-
ջաններուն ու տեւական յօդադատերու պարագային։ Ծիւրեր, ճիւղեր
արձակող խիւրդի [cancer], առաջացած չաքարախտի նման անդրաշ-
խարհէն լուր բերող ախտերու դէմ արդի բժշկութիւնը իր ո՞ր միջոց-
ներով կրնայ յաջողապէս պայքարիլ։ Գիտութեան էն պատկառաղովու
դարմաններուն առջեւ սիրաի անողոք հիւանդութիւններէն ո՞րը զլուր
կը ծռէ։ Բոլոր այս պարագաներուն, բժիշկին ընելիքը չառ չառ ակտ-
ային նոսրաները մեղմացնելուն, անոնց ընթացքը առժամապէս կասե-
ցնելուն մէջ կը կայանայ։ Բայց որչա՞փ փրկարար ու արդիւնաշատ
եղած պիտի ըլլար իր միջամտութիւնը, եթէ ան կանչուած ըլլար բա-
րեփեսելու համար անդառական այն ամէն խանդարումները, կարգի
բերելու բնախօսական այն ամէն պարտազանցութիւնները՝ որոնք վեր-
ջապէս վերոյիշեալ հիւանդութիւններուն կը յանգին։ Եւ եթէ բժիշկին
զործը թոքային ուռուկանութեան [թոքախտ] նման տեսականապէս վա-
րակիչ ու գերազանցապէս փոխանցիկ ախտի մը երկրորդ կամ երրորդ
աստիճաններուն հետ է, այդ չրջաններուն ակամայ խաբեւոյաւոր դե-
ղագիրներ բանաձեւելէ ու անոտի յոյսեր ներշնչելէ զատ ի՞նչ կրնայ
ընել, քանի որ հակառակ ամէն օր առտուն կանուխ ելլողը թոքախտին
դէմ մեծաշունչ ու բանդաղուշական դեղեր ու սաժեր [չարս] զանե-

լուսն , մեռելափոսերուն մեծագոյն մասը Քօխի մանրէին աւերներովն է որ կը լեցուի . մինչդեռ եթէ թօքախտամերձ վիճակներու մէջ՝ բժիշկին ու անոր միջոցով տուող ազդեցիկ և բնադարմանական ազդակներու [օդ , լոյս , արեւ , սնունդ] դիմում ըլլուէր , անհնարն է հաւանականութիւն մը կար հրեւհը իր կայծ վիճակին մէջ մարելու :

Առնենք հիւանդութիւններու ուրիշ դասակարգ մը : Քօլերաէ , ժանտառնդէ [թիֆօ] , մեկեկմիթէ , կարմրախտէ ևւ ուրիշ ծանրակշիւ տենդային սուր ախտերէ տառապողի մը սնարին մօտ ինչ կ'ընէ բժիշկը . ախտանշանները դարմանած միջոցին՝ միջոցներու ժանրին սաստկութեան ու առատութեան դէմ կրնա՞յ մարանչիլ , և երբ այս ախտերը մահաբեր թանկէն ըլլան՝ կրնա՞յ ախտը վախճանին առաջքը առնել : Բոլոր այս հիւանդութիւններուն հանդէպ՝ բժիշկին պարտքը վարակուածին ազդեցիկները ցամաքեցնել , մանրէներու արշաւին դէմ պատուարներ կանգնելով զանոնք սաղմոյային վիճակի մէջ վիժեցնել է , ինչ որ լոկ ախտանշանները ամօքելէն շատ աւելի օգտամատոյց ու նախապատիւ արարք մըն է : Մէկ խօսքով , եթէ բժիշկներուն մեծամասնութիւնը փոխանակ այսչափ անստոյգ կերպով հիւանդներ խնամելու , առողջները ախտադերձ պահելու , հիւանդութիւնները նախատեսելու և անոնց սնրմանը ամօքութեան՝ դատապարտելու գերադանցօրէն մարգարտական արարքովը պէտք եղածին չափ զբաղէր ու անոր մէջ փնտռէր իր շահը , սրչափ վեհօք , բարերար ու արդիւնաշատ դեր մը կատարած և սրչափ նաեւ իր ընկերական դերքը և բարոյական նկարագիրը բարձրացուցած պիտի ըլլար :

Բժշկութեան վրայ խօսուած պահուն , ո՞վ չէ ըրած կամ լսած սա զխտողութիւնը , բժիշկներուն համար նուատաացուցիչ ապահովապէս . «Ինչ եղակին արուեստ է այդ որ ուրիշին ցաւովը կ'ապրի և կը հրճուի՝ երբ հիւանդները բազմաթիւ ըլլան» : Կան անանկներ ալ որոնք բժիշկին հաճոյակատար երեւալու համար՝ սա տափակ հարցումները կ'ուզեն . «Գո՞՞ էք , այս միջոցին շատ հիւանդ ունի՞ք» : Եւ իրաւ մարդ բաւական պիտի գտնուի որ անհաշիւ ևւ անհաշիւ է այդ ֆօնքիլիաններուն մէջ հեղնութիւն մը չնմարելու համար : Արդ . ինչպէս ամէն ոք , այնպէս ալ բժիշկը պէտք չէ որ ուրիշին ցաւէն ու տառապանքէն քաղէ իր շահը , քանի որ բժիշկ կոչուողն ալ գերմարդկային արարած մը չէ . ընդհակառակը ամէնուն պէս անիկա ալ ուրախանալու է հիւանդներուն սակաւութեան և անոր մէջ փնտռելու է իր շահը : Իրապէս կան միջավայրեր , ուր շահելու այս եղանակը , որ բժիշկին տարօրինակ կը թուի , շատ բնական և օրինաւոր կը նկատուի : Միշտ միջավայրերէն մէկն է բանակը , Հոն , բժիշկը ինչ բանի համար կը պարծի . ու ինքզինքը հպարտ կը զգայ , հարկւրաւորները դարմանած ըլլալուն համար . — ո՞չ երբեք , այլ ընդհակառակը երկար ժամանակամիջոցի մը մէջ շատ քիչ հիւանդ ունեցած

ըլլալուն հաւար . և իր հոնգիւտին, հաշակին ու վարձքին հափը և առաիծառը այս վիճակին հետ ուղիղ կը համեմատի : Հոնուղ , բանակին մէջ, զինուորական բժիշկը հիւանդ զինուորներէն անհամեմատ աւելի առողջներուն հետ է որ գործ ունի . անոնց Քիզիլքականին վրայ միշտ կը հսկէ , զանոնք յաճախ քննութեան բովէն կ'անցընէ, և իր հոգածութիւնները անոր համար կը չսայլէ, որպէսզի սկսելու վրայ եղող կամ սպառնացող հիւանդութիւններուն հետքը դանէ ու զանոնք մոլորեցնելով վարակումներուն և համաճարակներուն առաջքը առնէ : Զինուորական բժիշկին բրածը նախագոյշական թժշկութիւնն է , և բժիշկ մը ըլլալէ աւելի առողջարան մըն է որուն պատուէրները պատգամներու պէս նուիրական , վճիռներու պէս անդառնալի են : Դարձեալ, ճարտարարուեստական մեծ ձեռնարկներու գլուխ գահուողները՝ իրենց պաշտօնեաները ու գործաւորները պարբերաբար բժշկական քննութիւնէ անցընելով, առկէ առաջ եկած առաւելութիւնները օրմապէս գնահատած են. որովհետեւ չառ լաւ հաշկցած են թէ՛ իրենց գործածած մարդոց առողջութիւնէն ու եռանդէն կախում ունի իրենց գործառնութիւններուն բարոք ու անխափան կիրարկումը : Եւ այս պատճառով ոչ միայն իրենց պաշտօնեաները, գործաւորները ու անոնց ընտանիքները, այլ նաեւ իրենց գործատեղիներն ալ մասնաւոր բժիշկի մը խնամա հոգածութեան յանձնած են և որչափ քիչ հիւանդ որ դարմանած են, անչափ աւելի չառ վարձատրուած են : Զինուորական բժիշկներուն պէս՝ այս բժիշկներն ալ քիչ հիւանդ ունենալնուն համար , անտարակոյս ուրախ պէտք է ըլլան : Ահա այս է ճշմարիտ բժշկութիւնը , որ կը գոհացնէ , առողջական, բարոյական ու նիւթական երբեակ անհրաժեշտ պէտքերն ալ :

[Յաջորդով]

ՏՕՐԹ. ՊԵՆՈՆ ՊԵՋՅԶԵԱՆ

«ԵՐԳԻԹԱՆԱՆ ԴԲԱՆԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՈՆԱՆԷՆ ՆՏԻՐ» նիւրով ուսումնասիրութեան առաջադիւն , — զոր մրցումի դրած էինք ասիկա առաջ Մաւիսի մէջ՝ 2 ոսկի պարգևով , — ստացանք Տասերկու պատասխան , հարմարապէս պզտիկ քիւ մը՝ ուրիշ ամեն մրցումի ստացուածներու հետ քաղպատուելով : Ասիկա վերագրելի է ուսումնասիրութեան սերի պակասին՝ զրակն մրցումներու մասնակցութեան կոչուած գրողներու տով : Յաւով դիտեցիքն ճաշ ու՝ ստացուած պատասխաններուն մեջէն չիկնի կեանք յաջող ընտրութիւն մը ընել , ամենին ալ մեր առաջադիւնն անհամարապատասխան ըլլալուն՝ մեկ կամ միւս կերպով : Դրուածքներէն ունակ ուսումնասիրութեան ծրագիրով չիկն գրուած . ուրիշներու մէջ զրակն յաջողութիւնը կը պակսէր , թէ՛ դատումի , թէ՛ վերլուծումի և. թէ զրգիւտութեան տեսակէտով : Որով , ջաշով կը ծանուցանենք թէ՛ ո՛չ մեկ գրուածք հրատարակել յարմար դատած ենք , ո՛չ իսկ մեկը յաջողութեան պակար ունենալուն :

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄՐՄԸՐԵԱՆ

ԵՒ

ԻՐ ՆՈՐ ԵՐԿԸ

Ա.

Արեւալի խմբակը անոր համար կրկին ապէս ինքնատիպ տիպար մըն է , որովհետեւ հասկնալու , վերլուծելու , մարտնչելու անողին կարողութիւն մը ունի : Ուրիշ անձի մը վրայ՝ ոգին Ռուսոյի , Վոլթէի , Ռենանի և դեռ անհամար ուրիշներու , — զորս կարգացած է անյազ , — պիտի ընէր անվերջ ազդեցութիւն մը , պիտի բարեխառնէր ծայրայեղ գաղափարներու հոսանքը : Տէրոյնեց ո՛չ միայն չէ ազդուած այդ ընթերցումներէն , այլ բան մը գտած է անոնց դէմ ճակատացնելու համար : Մրմըրեան կ'ըսէ Թէ . « Եթէ վաճառք մը եղած լինէր , հանգարտ , ներանձնական մտնորթութիւն մը պարտաւորուած , Տէրոյնեց 'Նաբեկի' նման 'Կոթմ' մը կրնար արտադրել » : Այս կարծիքը ճիշդ ըլլալու որ և է հաւանականութիւն չընծայել : Տէրոյնեցի կեանքին փոփոխութիւնը ցոյց կու տան Թէ՛ ինք պայքարի համար ծնած է : Իր մէջ չի՞ տեսնուիր այն անհանգարտ ոգին՝ որ անդէ տեղ , Պրուսոյէն վաճառք , վաճառքն տարբեր տեղ մը և վերջապէս Պոլիս կը մղէ զինքը , ուր կը գտնէ իր ուղիին յարմար միջավայր մը : Գոտեմարտնչու համար ծնած է այդ անօրինակ անձը , սեմական յատկանիշերով անողոր իր Աստուծոյն համար : Ո՛չ մէկ առաքեալ , մուշտանդ հագի , ոչ մէկ միջնադարեան Յիսուսեան վանական կամ հաւատաքննութեան կրօնքով-կուրացած մոտմուր պաշտօնեայ այնչափ բազմազան զէնքեր ճակատացուցած է կարծեցեալ անհաւատութեան դէմ , զործածած այնչափ գիտութիւն , խորհուրդ , ծանօթութիւն՝ իր ըմբռնած առաքելական Եկեղեցիին և անոր խորհուրդներուն , պաշտօնականներուն , ճին յարբերուն պաշտպանութեան : Տէրոյնեցի կեանքը առաքելութիւն մըն է , և այդչափ մակնաւանդ ոգի , հնապաշտութիւն իրենց արդարաւոր անկեղծութեան մէջ կը գտնեն : Տէրոյնեց իր համոզումներուն մէջ արտակարգ անկեղծութիւն մը ունի , համոզումներ որոնք հաւատք են : Պրուսոյի հնչակաւոր պատ-

ռելին պատմէ՞ր մը կ'ըզէ ըլլալ այն հոսանքին դէմ , որ իր կարծիքով կը ապառնայ կրօնքը խորտակելու : Իր կրօնքը տեսակ մը մասնական ընդհանրականութիւն ունի : Հինը առաքելական է . հետեւադար , Հայ , Յոյն , Հատին իրեն համար հաւատար են : Շատ անգամ այս ձգտումը կը նշմարուի իր խօսքերուն և գրութիւններուն մէջ , և Եթէ իր խորհուրդներէն շատերը համարձակօրէն չէ հրապարակած , ժամանակակիցներու դատարկութեան վախէն է , զոր սակայն մտովին կ'առնէ և որ զինքը ետ կը կեցնէ : Տէրոյնեց 'Կարգիլէ' միտքին անհոնին սահմաններուն մէջ Թեւածել . իր հաւատքով՝ ներքին է մարդուն՝ միայն Աստուծոյ մեծութիւնը ճանչնալ , Անոր անքննելիութիւնը հասկնալ : Ո՛վ որ կը յանդգնի անձանցովին զգոյնիքին հետապնդիլ՝ անհաւատ մըն է , կորսուած հողի մը . ինչպէս Տէրոյնեցի կենսագիրն ալ իր իսկ հաւատքը և հաստատ համոզումը յայտնելով կ'ըսէ . « Ու Հայ պատուաւարանը չզործեց երբեք այդ յիմարութիւնը , բնաւ չընենց զկէն , պաշտեց » : Մինչև այս որոշ մոտմոլմիւն-ձեւին հասնելու համար , Թէ Տէրոյնեց և Թէ Մրմըրեան անշուշտ չարչրկած են իրենց ուղեղը այդ անքննելիին խորհուրդով : Խուզող միտքը , անհանգարտ , դժգոհ , երազաւենիչ մարդուն՝ պիտի դադրի՞ և պէտք է դադրի այդ խորհուրդին խաղաղութիւններէն : Անձանցը իր ներկայած բնութեան իսկ հանգստանքովը չի կրնար դադրել զբաղեցնելէ միտքերը :

Չտուրքեան պատուելին տարօրինակ տիպար մըն է , հաղուսակաւ իր տեսակին մէջ , ծիծաղելի , խորհիլ տուող , բուռն պատկառանք ազդող միանգամայն : Տէմիթիպաշեան անձնուն զրազէտը իր նամակին մէջ կ'ըսէ . « Եւ մտածելու ոչնչան անկարող եղած է , որ Մեծին Բասկալի մտածութեանց ամէնէն հանճարագոր մտածութիւնները զանց բրած է Թարգմանութեանը մէջ » : Հապճեղ պատաստան մըն է աս՝ Տէրոյնեցի մասին : Այդ դատողութիւնը՝ այնչափ սխալ է , որչափ ճիշդ է Թէ Պրուսոյին զատող մը և խորհող մը միանգամայն եղած էր , ճարպիկ արամաւուն մը : Ընկերական կեանքի շրջաններու ծագումին , ազգայնութեան՝ մասին իր՝ գրած մէկ քանի էջերը միայն կը բաւեն ճանաչելու Թէ՛

որչա՛ն խորհող մարդ եղած էր Տէրոյնց եւ մինչեւ ո՛ր հասցուցած իր արամարանելու հորտորութիւնը ։ Խորհող մըն է Տէրոյնց , հնամոլ , անբացատրելի առհաւումիւնով յազեցած ։ Իր խորհողութիւնը կը ծառայեցնէ անպատասխանատու խմայական հին ոգիին պաշտպանութեան , կրօնքին ուղղութեան , առաքելականութեան ։ Ասոր համար Զոհալի խմբագրողը կը ձգտի ջրել ամէն նիւթականութիւն , նիւթապաշտութիւն , բազմաստուծութիւն , համաստեւածութիւն , անկրօնութեան հակում եւ ասոնք ընելու համար պէտք էր լսն մը գտնել , ըսել , ընդդիմարանել ։ Տէրոյնց կը գտնէր միշտ լսն մը՝ որ կրնայ աղէտ ընթերցողին , ոչ - գիտական , ոչ - քննական միտքի մը բաւել , գոհացում տալ եւ զարգացած ընդդիմարանն ալ մասնել շփոթութեան , տարափի ։ այնչափ զօրաւոր է ինք , սարսող երբեմն , արամարանելու տանն ։ Հասարակական , ընկերական իրադարձութիւններու խորունկ տեսցոյթութեամբ լեցուած է , ինչպէս Թէն , եւ ասով կը ջանայ մտաւորական նոր սկզբունքներուն աղետալի հանգամանքը ճշդել ։ Օրինակներ կը աւերացնէ , նստիկն եւ իր ատենի Յրանաւի մարդարանական եւ կենցաղային փիճակագրութիւններէն ։ Միտքի այս առեւտրի ուղղութիւններ ունին իրենց ազդեցիկ կողմերը ։ Պատմական եղեւթութիւններ ցոյց , կու տան Թէ՛ ո՛րչափ փոփոխ , յեղ յեղուկ , ալիքալեւի է մարդկային հաստեմանքու խիղճը եւ որչափ պէտք ունի անձող ուժի մը ։

Մրմրեալն իր այս կենսագրող-պատմական արժէքաւոր գործին մէջ կը ջանայ նուազ մտեւանդ , նուազ վիճող եւ շատ բարի հոգի մը ներկայացնել Տէրոյնցը ։ Նախատիրութեան մը աղիւնք՝ մասնապէս ներելի ։ Տէրոյնց աններող մըն է ։ կը կեղծէ երբեմն նեղ սրբագանքու մէջ ։ Տոկուն պայքարի մարդ , ասոր համար խիկ ծնած , առանց վէճի , առանց իր համբաւած կուտարիքութեան Թերեւ Տէրոյնց ջանմանսար ։ Ամէն մէկ էջին վրա Զոհալին կամ երեւակին՝ խաթ մը կայ , քննելի խղիւր մը , վիճելի կէտ մը . նաեւ այն լեզուն զոր կը-գործածէ իր ընդդիմադիրներուն դէմ , երբեմն անտեղիութեան սահմանները կը Թեւակոխէ , հայհոյութիւններու կը մտնեն այ , այնչափ կ'անաբղէ , զազրելի

ատեցողութիւնով մը , իր խաթուածքին ցանցնող հանգամանքովը Թուլցած , զինուլցած ։ Եթէ չի հայհոյեր ան , կրօնի դէմ գործելու վտան է որ զինքը կ'ընկրկէ ։ Թէ Տէրոյնցի հակառակորդներն ալ քիչ չեն անարգած զինքը ։ Վիճողի հայհոյութիւններ՝ որոնք անմահացուցին Արժնի անտեսու Կարող գրիչ մը որ շիտած պէտք է ըլլայ Արքիմէալ եւկղիտաի հետ՝ Տէրոյնցի շրջանին նորբուրե քննադատութիւնները պատուելիին դէմ խիտ անտեղի կը գտնէ եւ յաւակնտաի ձգտում մը կ'ուզէ նշմարել անոնց այդ ընթացքին մէջ ։ Դիտելի պարագայ մը կայ հոս , որ միշտ դատողութիւն վերադառնալու կ'առաջնորդէ եւ ինչ որ քննադատութեան տակ չկրնար խնայ իր ներկայած պարագայական հանձնարքովը , քննադատելու կը մղէ սարգայի անխղճմտիւլ դատողը ։ Կիրքերը կը վարեն մարդը , ինչպէս կրօնի ամենէն բուն ու մոլոր ազդակներով կը վարուի Տէրոյնց , գրեթէ իր գործին անպատասխանու . առեւ Տէրոյնց լսողներ մը՝ ունի իր մէջ , բաւարար իր անձին , լուսաւորող , զինքը գոհացնող եւ կը կարծէ այդ տկար լոյսով վանել իմ աշական նորմուտ սկզբունքները ։ Կրօնքը նոր երեւոյթներ կը ստեղծէ , նոր տարբեր՝ որոնց գոյութեանը համար խիկ ինք կը մնայ երկրորդական ։ Արգամաւի՛ր Թէ հիտնալ այդ Տէրոյնցին վրայ Երկուն ալ ։ Տէրոյնցի արտադրութիւնները իրենց միտկողմանի հանգամանքով խիկ պիտի կրնային զրական հակայ մասենադարան մը տալ մեզի , եւ է անոնց ոճը . չունենալու՝ առմիկ դրոշմ մը , խախտած ռամկութիւններով , իր մշակած նիւթերուն լրջութեանը համեմատ ։ Ահա պղտիկ օրինակ մը Պրուսացիին աշխարհաբարէն , Ռընտնի հայ Թարգմանութեան առիթով երեւակի իր քննադատականն քաղելով . — « Զայնին խմբագիրը՝ որ Ռընտնի գիրքին հերքումը մեր ազգին կրեւէն կ'ուզէր , կը հաճո՞ւ արդեօք մեր գրիչէն ելածն ընդունիլ , կամ արդեօք կը մերկն՞ գրողը մեր ազգի կրեւէն չէ ըսելով ։ Ասոնց այն ալ որ ընէ նէ , կամքն իրն է , մենք այս գրածնիս անոր համար չենք գրեր , զայն աղու Եւթան եւնախայ պարզամիտներուն համար կը գրեմք ։ Այո՛ , թիշղ այդ պարզամիտներուն հասկնալի ըլլալու անտեղի ճիշդին համար է

որ Տէրոյնց կը մեղցնէ լեզուն ։ Առանց այդ մտածումին՝ ան պիտի կրնար հիանալի, ժամանակակիցներու հետ անբաղդատելի արձակ մը գրել, որուն սահունութեան ասարցոյցը կու տայ, մանկունակ, տղայական նախադասութիւններու քով յանկարծ ։ Հեղինակ մը որ ապագան նկատի չառնէր, ներկային կ'ունկնդրէ միայն, անոր կը խօսի, զայն կարգի բերել կը նկատի, անա Տէրոյնցը ։



Մեծ. Մ. Կոչեցի

Մըմըմեան լայնօրէն, իր միաբնի հաւումներուն համեմատ, խորունկ կերպով ըրած է Տէրոյնցի ներքինին արտաբերումը ։ Միայն թէ՛ այս գործին մէջ հեղինակը Տէրոյնցի համար նպատուար կողմի մը կը հակի [1] ։ Մըմըմեանի և իր Տէրոյնցին մէջ խորհուրդներու, զանազան ընդհանուր զաղարկանքներու մասին համաձայնութիւն մը, հաշտութիւն մը կայ, թէև բազմաթիւ եղբրը տարբեր զիժերն մէջ այնչափ հեռու են Պրուսացիին և իր կենսագիրին միջև ։ Ատոնցմէ՛ մէկն է՝ նորերու դէմ՝ յարգելի գրագէտին քննիւթը ։ Հակառակ հազուադէպ նախատիրութիւններու, որոնք սակայն պատմական գործին—որ պէտք է ըլլայ իրբու և ընթացքներու անկողնակալ ներկայացուցիչ մը —կը վնասեն և զայն թերի կ'ընեն, Մըմըմեանի այս գործը հիացումի արժանի է, ինչպէս իր նախորդ բոլոր երկրը, բացի Իննեակէնցէ, որուն մէջ բիշ բան կայ իմաստասիրական, նկարական հիանալի էջերէ, խանդավառ mysticismէ, բնասերի մը, անսանդի մը [visionnaire] խանդառ սլացքներէն զատ, որոնց ամբողջութիւնը զրական գործ մը միայն կարելի է նկատել ։ Տէրոյնցը կարեւոր էջ մը կազմէ Ալեկուիա յերուսաղէմին հետ՝ հոյ զրականութեան մէջ ։ Որովհետեւ պատմական արժանիքէն զատ զրական գործ մըն ալ է ան, Միսաքեանի կենսագրականին հետ ։

Մըմըմեան արուեստագէտ մըն է, styliste մը, վանական մը, որ արտաքին աշխարհէն շեշտ մը ունի իր մէջ ։ Յրախն, բարբառիկ բայց զոհանջող, հաճոյք տուող բան մը կայ այդ ոճին մէջ, պատկառանք

[1] Եւ ո՛րչափ . մինչեւ սրբացնելու ասիկան հմտաբխնով լեցուն քայց լայնախոհութեան համար պարագ միւր մը, ու յամառ մոլեռանդութեան ներս մը եղած է, ի՛ր համոզումներուն, ի՛ր դաւանանքներուն անայլալ պատշապտութեանք անդրդուելի անձկանքներով, կուրցած իմացական այլաբեմն ու նշանաւորչակ ամեն ոգիի ։

Խմբ. Գիւն.

[2] Պերպեանի սան Եւ հիմա Պերպեանի մէջ ուսուցիչ՝ Չեօկիւրեան իր կրկնէ Ռուզապետին հաւասեր Իննեակէն մասին ։ Բայց, լոկ բանասեղծական ներշնչումով գործ մը՝ ինչպէս է Իննեակէր՝ կոչուած չէ իմաստասիրութեան դասագիրք մը ըլլալու ։

ներշնչող բան մը [3] : Մրմըրեանի ոճը դարձեալ է երեք տարրով : Տոնային ազնուականութիւն մը իր ազդեցութիւնը բերած է անոր մէջ : Մենտկեցութիւնն ալ ունի իր բաժինը հոն, և երկարատեւ աշխատութիւնը ոչ ոք Մրմըրեան ջանացած է տիրանալ անոր : Այդչափ վանականի , վանական ամուր որմերու ետին կամովին անցում կեանք մը կրնար տարրեր խառնուածքով զրոյի մը քով ծխել զրական արեւատը և ոճը եռնաբլիկ ոչնչացում : Բայց «Նէհարի Երազը»-ին ճեղքնակը բանաստեղծ մըն է , անսկիւնեղու սիրահար , որ երբեմն սիրոյ քղանցքին ալ հպիլ կ'ուզէ կամ կը հպի : Մրմըրեանի բոլոր գործերուն մէջ մանրամասն պատկերներ չկան . ոչ ալ երկար նկարագրականներ տեսարանի , դէմքի մը , յիշատակարանի մը : Երկարատեղութեամբ չէ , ոչ ալ réaliste : Բայց Տէրոյնեցի կենսագիրը յատկութիւն մը ունի տնտգիւտ , հազուագիւտ ուրիշներու քով , իրեն սեփական : Ինչ երեւոյժ որ ուրիշ մը շատ մը տողերով պիտի կրնար ներկայացնել որոշ , Մրմըրեան միայն երկու բառով կ'ընէ այդ բանը , և պէտք է խոստովանի թէ՛ կը յաջողի ամէն մանրամասնութիւններով ներկայացնել իրը , դէմքը , կամ տեսարանը : Երկու բառով ամբողջ նկար մը : Տէրոյնեցի կենսագրութիւնը , Մխարեանինը , Ալէլուիա յերուսաղէմը շատ մը օրինակներ ունին այս կարգէն , զրուանքներ կարճ , խիտ , լափնական բառերով պատկեր-

ներու : Ասոր պատճառը ան է որ՝ նախ Մրմըրեան համադրող մըն է , երկրորդ որովհետեւ լեզուի բառերուն , անոնց արժէքին խոր զխտկցութիւնը ունի : Ուսկեղէն մատենագրութեան գանձերը իրեն զանազան չեն . ինքը անոնց բարեկամ մըն է : Ետտ անգամ բառերը կը կերտէ , կը կը շրջէ նախադասութիւնները և իր phrase-ը կոմիկ սեղմութիւն մը կ'առնէ , և զրարատի կազմական ձեւը աշխարհարարի տարագրով կը պահէ տեղ տեղ : Այս ոճը կայ Տէրոյնեցի կենսագրութեան մէջ , երեւութապէս անպահանջ , աննշեւեւ , բայց գեղատէր զրագէտի մը խնամատ աշխատութեան տրոյնը . այդ ոճը կայ իր բոլոր գործերուն , մանաւանդ Ալէլուիա յերուսաղէմի և Մխարեան Պոէտին : Կենսագրականին մէջ :

Բարեբաղդարար Մրմըրեան կը դրժէ իր ուխտերը . այլապէս զրականութիւնը Թանկագին մշակէ մը պիտի զրկուէր : Հանդիսաւոր , հաճախական յայտարարութիւններէ ետքը թէ՛ պիտի դադրի զրական աշխատութիւններէ , լռութիւնը և մեկուսացումը կարճ կը տեւէ զրագէտին : Միջոց մը ետք զինքը նորէն կը տեսնենք նորմոնի փունջերով բեռնաւորուած : Կամբի , տոկոն աշխատութեան , լուրջ գործերու , յարշնտութեան ինչ օրինակ այս ճեղքնակը : Ներկայի լաւագոյն , ներկայանալի , հազուագիւտ տիպար զրագէտներէն մէկը : [Լեւրջ]

ՏԻԳԲԱՆ ԶԵՕԿԻՐԵԱՆ

Այն գրաւիչ վեհօրհիւնով երթողական խոյանքին , վեհմի փոսեցող ոնին եւ գաղափարներու արժուային սաւառնումին մեջ , որով *Իննեակն* է գրուած , բանաստեղծին միտքի չլրմարկաւեցումիլ իմաստասիրական *թեոլոգի*ներէ եւ բժախնդրէնց նրբախոյզ վերլուծական խղմոսութեան մը կապակից ու *մէթոֆի* դասականութեան , ինչ որ էական նպասակալէսք չկազմէր *Իննեակն* բունչով ու աւիւնով գրական էջերու , ուր իմաստասիրական դոքսինեւապատեւութեան եւ վարդապետական [dogmatique] բարոյնութեան մը պակասը՝ կը փրկուի ի գործին զուտ գրական-բանաստեղծական ձգտումին յաշտութիւնով , ինչպէս պէ՛տ է դասուիլ *Իննեակն* եւ ինչպէս յղացուած իսկ է հեղինակէն :

Խմբ. Գիւն.

[3] Թէեւ քիչ մը չարաւրում եւ բացարձակութեան փառաբանութեամբ զարմուածներով ու առումներով խաբարուած լեզու մը երբեմն , որ *cous* տեղ կը պղծէ հմայք-ի ռսկեղինիկ ոնին :

Խմբ. Գիւն.

ՅՈՅՆ ՊԱՐՈՒԶԻ ՄԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՇ

Յաճախ երեւակայած եմ թէ՛ ինչ եղած են նուիրական պարերը Հնդկաստանի , Եգիպտոսի կամ Յունաստանի տաճարներուն մէջ , Ծանօթ է թէ՛ տաճան մը հրաշալի շքեղութիւններու եւ զեղեցկութիւններու դիմադրողային ներկայացումները նպատակ ունէին պատկերացնելու կրօնքին էն բարձր խորհուրդները , Բաւերով կամ առանց բառի , բայց միշտ երաժշտութիւնով՝ այդ կեդրանի պատկերները [tableaux vivants] կը ներդրածէին մոգական ազդեցութեան մը պէս , հանդիսատեսներու հոգիին վրայ , իրենց կայքին [attitude] ազնուութիւնովը և շարժումներու [geste] պերճախօսութեամբովը : Մարդկային ձեւը հոն իր երկնային մտածումները կը մտնանայնէր : Իր շարժումները կը թարգմանէին փետ գագացումներու վերանցական գաղափարներ : Յունաստանի մէջ , ուր զեղեցիկին խորհուրդը այնչափ ճկունութիւն ու նրբութիւն ստացաւ , հոն ունեցաւ այս նուիրական ներկայացումէն զատ ուրիշ օտար անտուրը ներկայացում մը , ոչ նուազ նրբացած ու զեղարուեստական , որ կը պատկերայնէր ընտանեկան կեանքի տեսարանները : Թանկարտի աղիւսները կը հայժայժեն մեզ այդ օրինակները՝ Ո՛չ մէկ բան տոնչափ սրամիտ , շնորհալի ու աւելի բնական է :

Մարդկային մարմինին խորհրդանշանը Յունական Արուեստին խորիւն էր . ահա՛ թէ ինչու պարը Յոյներուն քով բանաստեղծութեան ու երաժշտութեան normen էր : Քրիստոնէական արուեստին մեկնակէտը կը գտնուի մարդկային էակին միւս ծայրը . կ'ընկզմի մտածումի ու զգացումի ուղիէանին մէջ , դաժանօրէն՝ փնտռելու համար հոն՝ հաստատ գետինը ձեւի եւ զեղեցկութեան Դալով դրաւորաւ արդիական արուեստին , որ սարկօրէն կը կոպկէ արտաքին բնութիւնը , աւելի մօտ է ծաղրանկարի մը , քան իրական արուեստին : Մենք գագած ենք մինչեւ անհունածիր հորիզոնը դիտողութեան ու մտածումի . սակայն կորսնցուցած ենք զիտութիւնը , արուեստը , եւ կը համարձակուինք իսկ ըսելու՝ բարոյականը մարմնական զեղեցկութեան , որ պէտք

էր ըլլալ կրթութեան և օրաւարիք արուեստին հիմը : Ոչ մէկ պար , ոչ մէկ ծառայող չէ՛ կրցած տալ մեզի այն տպաւորութիւնը՝ զոր յայտնած է մեզի քանդակագործութիւնը՝ յունական հեծանոս աշխարհի կեանքին դիմախաղական արուեստին մասին եւ աւելի՛ նուազ չէ՛ կրցած տալ այն տպաւորութիւնը՝ զոր մեզ նախզգալ կու տան մեհեաններու նուիրական պարերը : Անգամ մը միայն , բոլորովին անսկիւղ կերպով մը կարծեցի՝ ներկայ գտնուիլ զրեմէ հրաշագան յարութեանը այդ հեռաւոր մոգութիւններուն : Կարծես անխախտ լոյսի հիմք մըն էր , ժայթքող ժամանակակից տեղութիւններու քառսին ծոցէն , շանթ որուն յաջորդեց աւելի ծանծաղ զիշեր մը , բայց ինձի մոռուց անմոռանալի տպաւորութիւն մը , զոր պիտի փորձեմ նոճագրել հոս :

Քանի մը տարի կ'ընէ , Բարիզի բարձր շրջանակներէն մէկուն մէջ , ծանօթ մեկեւտար մը , հաճելի ծերունի մը , հաճոյակատարութիւնը ունեցած էր տրամադրելու իր աւշօքը՝ հնէաբանական Ընկերութեան հիմնադրութեանը՝ որուն այսօրուան նախագահն է Պ. Տիէօլաֆօ . յայտադիրը սապէս կը սկսէր .

Յունական պարեր Օր. Հ . . . ի կողմէ , դաճնակի ընկերակցութիւնով Պառոն Պառոնկօ Տիւֆուսթի . կողմէ :

Ըսած էին ինձի թէ՛ Օրիորդ Հ . . . արուեստէն էր , հարուստ Անգլուէի մը , որ իր պզտիկ տարիքէն հին արուեստին սիրահար էր : Երբեք հասարակութեան առջեւ չէր երեւցած , իր ներկայացումները վերապահելով իր լծատնեան շրջանակին քանի մը ընտրուած բարեկամներուն : Այդ միջոցին Բարիզ գտնուելով , ուզած էր կադրնտել այդ նորուստ կազմ ընկերութիւնը նոր արուեստի մը քանի մը նմուշներով : Իր փափաքը քանի մը յունական պարերու յարութիւն , տալ չէր բնուած [ծանօթ է որ Յոյները երկու հարիւրէ աւելի կը համբն իրենց պարերը] այլ իր նպատակն էր կեանք տալ դատական քանդակագործութեան՝ արտայայտիչ դիմախաղութիւնով մը : Քրմուհիները ու Մուսաները , որոնք մեզի կտակած են Հելլաստի ու Իծիլիա քանդակագործները , կենդանի օրինակներ ունեցած են . կարելի չէ՞ր , մտածած էր Օր. Հ . . . , վերականգնացնել այդ օրինակները :

այդ գեղեցիկ բայց ցուրտ պատկերները իր մէջը մարմնացնելով : Քանի որ կարելի էր կենդանի կիները արձանի վերածել, պէտք էր որ կարելի ըլլար արձանները կենդանի կիներու վերածել : Այդ բանը ընելու համար՝ ուսումնասիրած էր ոչ միայն դասական մեծ-ժեշները, այլ նաև հաւատարապէս Բանակ-րաի արձանները, կամ ներկուած անոննե-րու վրայ շինուած դէմքերը . կ'ուզէր մէկ բառով յոյն քանդակագործութեան կալածէն ըլլալ, իր կամքէն զատ առանց ուրիշ Բիկմա-լիանի մը, կալածէ մը՝ որ իր խոնդին մէջ գտնէր կրակը՝ մարմարը բաբախուն միայ վերածող : Այս փորձը մեզի համար ճշմարիտ անսկիւն մը եղած և իմ բոլոր ակնկալու-թիւնս գերազանցեց :

Միջին ու երկայն սրահի մը խորը սարա-ւանդակ մը շինած էին և Երիտասարդ աղջիկ մը անոր վրայ ոտքի կեցած էր զոշոտկին դէմ նստող երգչանման մօտ . կը խօսէր ու կը խնդար արուեստագէտի մը համարձակու-թիւնով, որ երգելու կ'երթայ, կամ բարձր զատակարգի պատկանող անկնոջ մը պէս՝ որ կը պտարտատուի վառքի մը : Եւ սակայն իր հագուստին լրջութիւնը կը մասնէր իր նպա-տակին բարձրութիւնը : Թեւեթը մեկը էին . և երբ կը բալէր, սրունքները կ'որոշուէին հա-զուստին տակէն . զլուխը յարդուած սեւ մու-զեխովը՝ շողշողուն պատկի մը պէս, աւելի կը յիշեցնէր Հռոմէոսի մը քան Հելենուսին : Իր խոշոր ու հանդարտ աչքերը իւրաքանչիւր բառին և իւրաքանչիւր ծախսին շանձեր կ'արձակէին : Պարուն Սօլտի մեզի պատրաս-տեց իր պերճաշունչ ճառովը այս հագուա-զիւտ ներկայացումին, յայտարարելով թէ առաջին տեսարանը պիտի ըլլար ճին արուես-տէն .— Շարկիսի Յափշտակութիւնը :

Դաշնակը հովուերգական եղանակ մը կը հնչեցնէ, յունական ժողովրդական պար մը, ձեռնհատութիւն նոթագրուած Պ. Պուռիօ Տիւ-քուորօէի կողմէ, յատկապէս տեսարանի խա-ղերուն համար, որոնք պիտի սկսին : Օր. Հ. . . կը բանայ իր շարքը և գաւազանի հարուածով մը ահա՝ կերպարանափոխուած է . յոյն պատանի [éphèbe] մըն է դարձած որ դաշնաբուն մէջ կը ծափափի բան մը հա-լածելով :

Իր բազուկները պարզուած կամ զոցուած

փոխնիփոխ՝ կը նմանին երկամանջ անոթի մը [ampphore] կոթերուն կամ արմաւենիի մը ծաղի ճիւղերուն կամ ծովի մեծ թռչունի մը թռչելուն : Կեանքով ու գեղեցկութեամբ շող-շողուն այս տեսիլքին առջեւ սրանք . և իր պաճուճանքները, հանդիսականները և իրենց արդուգարդը, ամէն բան կը կորսուին կ'անհետանան : Բոլոր նայուածքները զամ-ուած են զիմաստադրանքին վրայ : Կիներուն զլխարկներուն գորշ, կարմիր ու կապոյտ փետուրները՝ որոնք կ'երբարային իրենց թա-ւիշներուն ու ժանեակէ ծալքերուն վրայ՝ կ'անշարժանան : Ալֆէասի [Alphée] կամ Իլլիսուսի [Illyssus] եզերքներն ենք : Ու Շարկիս մեր դէմն է : Կը ծռի աչ ու ձախ, թոյլ հակումներով, փոխնիփոխ, շարքավը կը պլլուի և յետոյ յամբարար, կարծես խոն-ջէնքէ մը զրաւուած, կը ձգէ որ վար կախ-ուի : Շարկիս տաքութենէ կը խնդրուի ու ծարաւէ կը մեռնի. յանկարծ կը սարսափ ու դէմքը կը ճառագայթէ . աղբիւրի մը զո-վածութենը շնչած ու զետակ մը գտած է . այն անուն շարքը կը թափ, հոս հոն՝ կը վազվզէ զինով շնորհալիութեամբ մը . կար-ծես թէ կը շնչէ բոլոր ամէն մէկ օլրածաղի-կին և կը հետեւի ամէն մէկ փախչող ալիքի և իւրաքանչիւր շերտիկի իր թռիչքին մէջ . վերջապէս ծռնկի կ'իյնայ ջուրին յատակ հա-յելիին առջեւ : Ենչ հրաշալիք նշմարած է արդեօք . ի՞ր դէմքը, իր սրաշտելի դէմքը, որ ջուրին մէջէն կը ժպտի իրեն ու իր բիւրեղ-եայ դղեակը կը կանչէ : Ու՛ զլուխը առաջ հակած, թռչելը բաց. պատրաստ գրկելու իր կրկնեղէնութիւնը, Շարկիս կը մնայ անշարժ, արքայանքի շարժումի մը մէջ քարոցած : Ծափերը կը պայծին . անոր հրապոյրներէն չկայ մէկը որ չազդուի . ամէնքս ալ կը կարծենք տեսնել éphèbe, մարմնացած :

ԷՏՈՒԱՌ ԵՒԻՌԷԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԶԱՐԱՐՈՒՄ

ՅԱԾՈՒՄՆԵՐ

Տէր խմբագիր.

—Երգիծական յօդուածներ կ'ընդունիր՞ Մասիսի մէջ, երբ հարցուցի, պատասխանեցիր .

—Ինչո՞ւ չէ, քանի որ Երգիծաբանութեան ալ զրաւանութեան մէկ սեռն է . և յաջող գրութիւններ միշտ իրենց տեղը ունին : Ինչո՞ւ չսիրել երգիծանքը, երբ ընտանեկան և ընկերական կեանքի յոռի կողմ մը կը ձաղկէ, ծիծաղելի դրուագ մը կը պատկերացնէ, բարբի զաւելադասան էջ մը վեր կը հանէ, սրամիտ ու հեղինակ գրիչով :

Այդ ուղղութիւնով շարժում կը գրեմ ձեզի առաջին յօդուածս :

✱

Ուղղեմ ուրեմն սուր դիտակ՝ մեր ընտանեկան շրջանակներուն մէջ և պատմեմ նորօրինակ և շանհեկան դէպք մը, որ մէկ երկու շաբաթ առաջ տեղի ունեցած է ծովագնացի գիւղերէն մէկուն մէջ : Հարսնիք մը բաւական ճոխ Տէր և տիկիններ և հոմեատափայլ օրիորդներ և իրենց ստուերները՝ համակրելի երիտասարդներ ներկայ են և քիչ տանէն եկեղեցի պիտի երթան նաւորտը կապելու համար նորոգականքուն ճակատին : Ամէն ինչ զուարթ է. խինդը չափ ու սահման չունի . բայց տակնուվրայութիւն մը կայ փեսայի և աներ-պապային միջև.

—Չըլլար :

—Բայց տղաս, պայմանիս անտեղ չէ՞ որ կէս տունը քու վրայ պիտի դարձնեմ :

—Չեմ գիտեր, ամբողջ տունը եմ է տաս, աղջիկդ կ'աւանտ :

—Տղա՛ս, ամօ՞՞ է, վերջ տուր այս խայտառակութեան, արդէն իմ բոլոր ունեցածս ձերը չէ՞ :

—Աղէկ ա, մենք ալ ձերը չենք :

—Բայց տղաս, մահկանացու ենք, ամէն բան մեզի համար է :

—Ուրիշ կերպ չեմ ընդունիր :

Միւս կողմէ բարեկամներ և ազգականներ կը միջամտեն, գործը անուշ տեղը կապելու համար : Համեմատութեամբ կը գոյանայ. տունը ամբողջութեամբ փեսային տալու որոշումը կը տրուի և խեղճ աներ-պա-

պան ստորագրութիւնը կու տայ : Տեսարանը կը փոխուի . վարագոյրը կ'իջնէ :

Հէգ հարսը իր ճերմակ հագուստներուն մէջ լալագին, մտածելով որ ինք տունի մը երկու ճիւղէկին հետ կը փոխանակուի, իրաւունքով զգածուած, բացարձակապէս կը մերժէ փեսացուն ձեռքը : Ահա նոր իրարանցում : Քիչ մը առաջ Թիւրքմանիւնը վերցնող բարեկամներ կ'աշխատին այս խնդիրն ալ վերջացնել : Զուր աշխատանք . աղջիկը անդադուելի է :

—Ուրեմն, կ'ըսէ լալագին, կէս տունը կ'աւանտ, լաւ, ես չեմ ուզեր զինքը : Տունը կրնայ տալ, որովհետեւ ան . . . կարծիք չունի, բայց ևս կարծիք ու կամք ունիմ :

—Պապօ, օրիորդ :

Խնդիրը կը մեծնայ, հարսին ծնողքը կ'աղաչեն ու կը պահաւորին : Հարսը միշտ անդրդուելի է : Փեսան անկիւն մը կենցած . . . կ'որոճայ : Ներկաները՝ ապշահար Երեւրը «Հայր մեր» կ'ըսեն : Մամիկները ասանկ բան տեսած չըլլալին կը յայտարարեն : Փողոցը կառքերը կը սպասեն : Հարսնեւորները, եկեղեցին կը սպասեն :

Երբորդ և վերջին վարագոյր .

Երիտասարդ մը՝ որ ամուսնութեան երբեք հետամուտ չէ եղած, կը սրտնչանայ օրիորդին վեհանքութեամբ և վայրկեանաւոր որոշում մը կ'ու տայ . —ամուսնանալ այդ աղջկան հետ :

Կը տեսնէ՞ք որ ամուսնութեան որոշումները ընդհանրապէս վայրկեանաւոր կը տրուին :

—Ես կը փափայեմ օրիորդին հետ ամուսնանալ, ոչ կէս տուն կը պահանջեմ, ոչ քուտրոյ տուն, ոչ ալ զրամօքիս . եմ է կ'ուզէք 300՝ ասի ալ օրիորդին տրամադրութեան տակ կը դնեմ :

Անակնկալ էր աս . ներկաները կը սրտնչանան : Օրիորդը որ նախապէս կոյս մնալ կ'ուխտէր, կը համոզուի և կ'ընդունի այս առաջարկը երիտասարդին : Որ դիբբի և նիւթականի աէր էր միանգամայն : Ծափահարութեամբ ամէն կողմէ : Նախորդ փեսան տերեւ պէս կը զոյգղայ : Ամօ՞՞նը եղած, կամացուկ մը սենեակէն դուրս կ'ելլէ, իր հետը տանելով հարսնեւորներէն շատերը :

Եկեղեցի կ'երթան ու պատկը կը կատարուի նորագոյն փեսայն հետ : Հիմա շատ երջանիկ են եղեր եւ վստահ ենք թէ միշտ ալ երջանիկ պիտի ըլլան :

Ասկէ հանելիք բարոյականնիս առ կ'ըլլայ որ՝ զրոտովի առնող երիտասարդները խնդիրը շատ ծեծելու չեն : Ետքէն իրենք կը ծեծուին :

✱

Կրթական նոր ծրագիրը արդէն ծնած է եւ կամայ կամայ իր չափահասութեան կը հասնի : Հինը, հազիւ 18-20 տարեկան, բայց մտքերը եւ մօրուքը ճարմկցած, հիւսնաւորոտ, տկարակամ, ազգուն եւ ծերացած է. անմտցուպիտով կը պտըտի եւ նիհար երեւոյթ մը ունի . իսկ նորը երիտասարդ ու գեղեցիկ է. իր գեղեցկութեան բարձրագոյն աստիճանին մէջ կը գտնուի : Պշտիկ տնտեսկցած ինն մը կ'ունենան երկուքը, զոր հոս կը նշանակենք :

— Գարեւ, մեծ եղբայր ծրագիր կրթական :

— Բարեւ, փոքր եղբայր ծրագիր կրթական :

— Հիւանդ եւ ծերացած կը տաննեմ քեզ :

— Այո, թէ եւ ժամանակէն շատ առաջ :

— Կ'երեւայ թէ տնկանոն եւ հովառաս կենանք մը վտարած ես :

— Քանի տարի է կանոնաւոր էր կենեքս, բայց առաջները քիչ մը հովառաս էի . պարսկահոգեմէնքու շատ կ'երթայի, հիմա երբեքն Թաւրոսն կ'երթամ :

— Քանի որ ես ծնայ, ալ քու գերեզման մանելդ մտնեցած է :

— Է, տղա դուն ինձմէ ծնար, շատ ինքզինքիդ կարեւորութիւն մի՛ տար, քիչ տանէն դուն ալ ինձի պէս կը լքուիս :

— Բայց դուն մեր վարժարաններուն բարձրակարգ օգտակար չեղար :

— Դուն օգտակար ըլլալուդ ինչ յոյս կը ներշնչես :

— Որչա՛րի տանէն ինձմով կ'աշխատին եւ հոգ կը տանին որ լաւ դաստիարակութիւն մը տանեն :

— Նոյն բաները ինձի ալ եղան, բայց գործնական ոգին պակաս եղաւ՝ ինձի համար : Դրան չվանեցին եւ արդիւնք ուղեցին, վարժապետանոց չբացին եւ վարժապետ պա-

հանջեցին, վերացական տեսլանքով յանձնեցին զիս եւ գործնական շրջանաւարաներ պահանջեցին, բարոյականին հետ զժանցան եւ բարոյական պահանջեցին :

ԷՆՏԹԹԱՆԹԱՆԷ

ԱՍՏՅՈՒԱԾ ԳԻՐԳԵՐ

Ասացանք օսմաներէն լեզուի ծանօթ ուսուցիչ Պէտրոս Էժ. Կարապետեանի յօրինած քննարկով **Մեծ Բառարան Հայերէն օսմաներէն** երկը, ստուար ու խնամուած աշխատութիւն մը, սպասուած մանր տպերով եւ պարունակող 1000ի մօտ էջեր. Այս գործը՝ կոչուած է գոհացում տալու կարեւոր պէսի մը, շատ ցնցողացուած օսմաներէն լեզուով գրադոյններէն : Գործին խնամքով եւ սպասուած խնամքով ջանք չէ խնայուած. ինչ որ աւելի կը շեշտէ իր արժէքը : Արդէն իրենց շնորհաւորական նամակներով, հրահրակուած հասարակ սկիզբը, թուրք եւ հայ ծանօթ գրագէտներ՝ կը վկայեն այս աշխատութեան յաջողութիւնը : Ամէն քաջալերութեան արժանի այս բառարանը՝ համեմատաբար իր ստուար ծաւալին՝ կը ծախուի չափաւոր գինով մը, 35 դր. :

Եւանգիլ Գործածութիւնը, հեղինակութիւն Լոս Էյվարիի եւ բարգմանութիւն Գրիգոր Էժ. Ոսկեանի : Հրատարակուած է Զարդարեան Գրատունին կողմէ, Խորագիրը լայն զաղափար մը կու տայ նիւթին վրայ եւ հեղինակին անունը գիրքին արձէյին մասին պերճալիս է : Լոս Էյվարիի այս հասարակ կարգի անհանգեւոր ընթերցանութեան յարմար բովանդակութիւն մը կը խնայէ. Խնամուած սպագրութիւնով եւ տիւրն կազմով այս գրքն իր ծախուի 7 դր. ի :

Մեկու Մտեր, հեղինակութիւն Տիար Արամ Գաբունեանի, առաջաբանով Ա. Էժ. Լուսինեանի, Զարդարեան Գրատունի հրատարակութիւն այս գրքն իր խնայելի մէջ մը քննաքննական կեանք, ճշգրիտ եւ Լուրձ. Տպագրութիւն Սագանեան Գինն է 3 դր. եւ կը ծախուի ամէն գրականութիւնով :

Հիմնադիր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ : Արտատպեր ՏՕԳԹ.Ե. ՄԱՍԻՍ : Տպագր. ՃԻՀԱՆ.

ՄԻԱՄԻՏԻ ՄԸ ԱՐԿԱՇՆԵՐԸ

Գեղեցիկ տղադուրթիւնով, գեղարուեստական կողքով, գրական հրապարակչ ներքինով: Օրուան գիրքը և ամէնէն խօսուած հրատարակութիւնը: Էջ 280: Գինը՝ 7 զրշ.: Կեդրոնատեղ՝ Աթմայօլ, Շիրին խան, թիւ 7, Օննիկ և Բնիկ: Կը գտնուի ամէն գրավաճառի քով:

ԳՐԱՏՈՒՆ ՀԱՊԷՇԵԱՆ. ԱՄԱՍԻԱ: Ամասիայի և չրջականե-

րու գրական պէտքերուն լիւրջի գոհացում տալու համար է որ հիմնուած է այս նոր գրատունը, ուր գիտակից խնամքով կը պատրաստուին արուած բոլոր յանձնարարութիւնները: Մասնաւորապէս յանձնարարելի է այս գրատունը բոլոր ստույգիչներուն ու գրասէրներուն, իբր միակ կեդրոնատեղ լաւագոյն գտնադիրքերու և լաւագոյն հրատարակութիւններու:

ՄԱՆԶՈՒՄԷ Միակ առաւան Հայաստանի, կը հրատարակուի արշալոյսին, և առաւել խիստ կանուխ կը գտնուի Պոլսի և արուարձաններու ամէն կողմը, բովանդակելով հեռագիրներ, քաղաքական, ներքին, եկեղեցական ու կրթական լուրեր, գրական, սոցալական և բնկերութիւն յօդուածներ: Զորեքշաբթի և Հարաթ օրերը կը հրատարակուի առանց ծանուցումի, չորրորդ էջը՝ յատկացնելով առեւտրական և գրական գրուածքներու: Գինն է 10 փարա: Տարեկան բաժանորդագրութիւնն է Պոլսի՝ 80 զրշ., դատա՝ 108, արտասահման՝ 25 ֆր.: Կեդրոնատեղ՝ Պոլսի՝ 50, դատա՝ 60, արտասահման՝ 18 ֆր.: Ամէն գրութիւն ուղղել Տէր և Տնօրէն Յովհաննէս Բ. էֆ. Իսլայէրեանի հասցէին՝ 38, Պաղը Ալի Ճապաէսի:

Դպրոցներու համար անհրաժեշտ

Դրասկենակներու համար կարելու

«Սաջոն»ներու համար զեղեցիկագոյն զարդը՝

ՀԱՅԵՐԷՆ ԵՐԿՐԱԳՈՒՆՏԸ

Հրապարակելու՝ վաւերացուած Հանր. Կրթութեան նախարարութիւնէն: Վարժարաններու վարիչներուն, բոլոր ընտանիքի հայրերուն և հայ վաճառականներուն կը յանձնարարուի մէյ մէկ հաս գնել այս կարեւոր և ճիշդեցիկ գորգէն: Գինն է չրջանակով 85, առանց չրջանակի 65 զրշ. գաւառներու համար՝ իբր անտուկի և փոխադրութեան ծախք 15 զրշ. աւելի Դիմել՝ Պաղը Ալի Ճապաէսի, թիւ 56, Յովհ. էֆ. Աղնաւորի «Օսմանլը» Դրատունը:

5Գ. ԳԵՂԱՐՈՒՆՍՏՈՒՆ ՑՈՒՑԱՀԱՆՂԵՍ «ՄԻՆՆԵՐ»

Բերա, Մեծ-Փողոց, Թ. 313, Ա. Յարկ

Ամէն օր քաջ է

Մ Ո Ւ Տ Ք Ը Չ Ր Ի

Ա. Կարգի մշակակ հետեւեալ ցուցանանքներէն. Բարիկ 1900, Սէն-Լուի 1904, Միլան 1906, Պրուսա 1906:

ՎԻՆԸ,

ՀԵՂԻՆԱԿ ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՄԱՍՈՒԼԻՆ ԿԱՐՄԻՔՆԵՐԸ

Այս անգամ պատմաւոյնքն աւելի տալիս մը կը ներկայանայ ենով Արմէն։ Այս գիրքով չէ՛ որ պիտի հաստատուի սա հեմարտութիւնը քէ՛ իր գրագոյն, հնախոյճի կարողութիւններուն կը միացնէ վիպորդի տաղանդը։ [Մերոյման Պարսաւան]

Արեւ. Մամուլ

Այնքն բացի իր գրական արմէնէն, տաղանդական տեսլիկով ալ ուսագրու հորութիւններ կը պարունակէ։ Հաւանաւոր ու սիրուն հասոր մըն է, որ փափաք կը ներշնչէ մէկ ծայրէն միւսը կարդալու։ [Խմբ.]

Արեւելք

Ենով Արմէն [Այնքն մէջ] կ'զգուցանայ այն միւս գրականութենէն, կ'զգուցանայ անհետ մեծ սեռեականութիւն վարագործներուն ետին դալկացող կեանքէն։ Իր ուզածը դուրսի կեանքն է, Կեանքը, գլխագրով, արեւին տակին, իր յորդ աղաղակութեան մէջ։ Ու հաւել, իր մօտ փառաբանող մը կայ մարդկային սկզբնական վաղնջական բնազդներուն, զոր երկինք կը հանէ, գլխագրով մը։ Ենով Արմէն յստիպօրէն sensualiste է։ [Արաշէս Յարութիւնեան]

Բիւզանդիոն

Անուշաք ամէն գրասէր պիտի փափաքի ունենալ Ենով Արմէնի այս հրատարակութիւնը, Այնքն, գրական գեղեցիկ վայելք մը քննադատելու համար։ [Ժիրաշ Շիրակացի]

Բիւրակ

Այնքն, հեղինակին գրչի այդ առաջնեկ զաւակը, հորութիւն մըն է իբր յղացում։ [Բարգէն Վարդ. Կիւրքեան] Այս

Այնքն իր գրական արժանիքին կը միացնէ տաղանդութիւն մը հիմնապէս առօրեայի ու բոլորովին հոր հաւանով, որ կը յասկանէ Արմէնին համակրելի հեղինակը։ [Խմբ.] Ծաղիկ

Երեսասարդ հեղինակը, որուն գրութիւններ անհամար հաճոյքով կը կարդացուին օրաբերքներու եւ պարբերական հանդէսներու մէջ, այս անգամ իր մտածումները խտացուած է սիրուն ու կոկիկ հասորի մը մէջ, որուն տաղանդութիւնը, բողբոջին ազնուութիւնը եւ գեղեցիկ հաւանքը հաճոյք կը պարգեւեն ընթերցողին ունենալու անկէ հաս մը։ Զերմապէս յանձնարարելի է այս գոգոյրիկ հասորը։ [Վահան Փափագեան] Հանրագիտակ

Իր ընդհանուր հանգամանքով՝ Այնքն կարդացուելու արժանի գիրք մըն է, յաւագոյն աշխատութիւններէն հեղինակին։ [Յակոբ Տեր-Յակոբեան] Մանգոլմէ

ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻԶՆԵՐՈՒՆ

Հեղինակներէ և հրատարակիչներէ անոնք՝ որ կը բաղձան Մասիսի մէջ ծանուցուիլը իրենց հրատարակութեան, պէտք չէ մոռնան մեր պայմանը թէ, 3 օրինակ զրկուած գիրքերը միայն նկատողութեան կ'առնուին և կը ծանուցուին :

ԱՐԵՒԵԼԻՔ ՕՐԱԹԵՐԹ ազգային, գրական եւ քաղաքական .— Բա-
րանորդագրութիւն Կ. Պոլսոյ համար՝ տարեկան 80, վեցամսեայ 45
դրշ. : դաւաճներու համար՝ տարեկան 108 դրշ. : վեցամսեայ 60 դրշ. :
և օտար երկիրներու համար՝ տարեկան 35 ֆր. : վեցամսեայ 20
ֆր. : Զուգէ վաճառում՝ քաղաք փարս : ԱՐԵՒԵԼԻՔ հրատարակ
կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ըն-
տիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով :
ԱՐԵՒԵԼԻՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխա-
տակիցներով առաջնակարգ տեղ մը կը դրաւ տեղական հայ մամուլին
մէջ, արժանացած՝ բնթերցողներու գնահատմանը, իր առաւելութիւններէն
մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ ԸՆԿԵՐԱՆ Հանգամանքը, որով իր բնթերցողնե-
րուն կը ներկայացնէ պարբերաբար Մանօթ Դէմքեր և երբեմն ալ տե-
սարաններ : Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուած-
ները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, եր-
կրագործական, իրաւաբանական և այլն, բացի գրական, բանասիրա-
կան գրուածքներէ, օրուան տեղութիւններէ ևն : ԱՐԵՒԵԼԻՔ վերաբերեալ
ամէն գրութիւն և բաժանորդագին ուղղել Տէր և Տնօրէն Գառեգին-
էֆ. Պոյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մահմուտիէ Ճառտէսի, ուր կը
գտնուին թերթին Տպարանը և Խմբագրատունը :



Jeprends tous les jours
de la vraie
CREME DE MORUE
de la Pharmacie VERDON-3-Meuse
C'est très bon !!!
Petite mère, se méfie des produits
similaires ; mauvais et digérant mal.
Le Flacon : 3^{fr} 50 dans toutes Pharmacies.
« SUPERIEURE à L'HUILE de FOIE de MORUE et aux EMULSIONS. »

Նշանաւոր Տոքթ. Բէքառի
այս Էմուլսիօնը կը դերա-
զանցէ հրատարակի իրայ
գտնուած բոլոր իր նմանու-
րը : Զուկի իւրի տեղ կը գոր-
ծածուի և անկէ աւելի
օգուտ ունի տղոց և տկաի

անձերու : Միակ ներկայացուցիչ Թուրքիոյ . Ո. Սօլախեանց, Կ. Պոլիս :

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ կը դարմանէ ամէն տե-
սակ ակռայի և լինտի հիւանդութիւնները, փտած ակռաները կը լեցնէ՝
առողջ ակռաներու պէս երկար ատեն դործածուելու պայմանով :

ԲՈՆՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՄԵԹՈՏՈՏՎ, նուրբ, ճաշակաւոր և դիմացկուն
արուեստական ակռաներ կը պատրաստէ, բնականին ճիշդ նման :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարմանատան մէջ, Բերա, Մեծ-
Բարձաք-Գարու, թիւ 8 : Կարօտ հիւանդները ձրի կը դարմանէ հինգ-
շաբթի օրերը՝ Բերաի Աղքատախնամ դարմանատունին մէջ :

Կիրակի օրերը ժամադրութեամբ կ'ընդունին :

“ՄԱՍԻՍ”-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՅԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և գտնառններու համար տարեկան 60 դրշ :
 Արտասահմանի » » 14 ֆրանք :
 Թղթատարութեան ծախքը մեր վրայ :
 Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգևները,
 միշտ ձրիաբար, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ :
 Մաւխի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է :
 Դրամ կարելի է զրկել փոխանակագիրով, օտմաննան կամ
 օտար մանսա-փօսքով և օտմ. թղթատարական նամակադրոշ-
 մով, 20 հաւը մէկ մէծիաի հաշիւով :
 Զննատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր :
 Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

Ե Ն Ո Վ Ք Ա Ր Մ Է Ն

“ՄԱՍԻՍ”-ի Հասցէով

Պապը Ա.Լի ճաստէսի, Թիւ 38

درعليه باب على جاده سنده نومرو ۳۸ «ما-يس» غزته سی اداره خانه سی

Rédaction de la Revue «MASSIS»

N. 38, Avenue de la Sublime Porte

CONSTANTINOPLE

“ՄԱՍԻՍ”-ի Նոր Շրջանի Ա. Տարիի հաւաքածոն, որ 1000 էջէ բաղկացած գրական գեղեցիկ հասոյ մը կը կազմէ, հրնայ ստացուիլ իմբագրութենէս, կանխիկ փոխար-
 ժէովը՝ 60 դրշ. կազմուած 65 : Թղթատարով ղրկուելիք
 Հասոյններու համար պէտք է 5 դրշ. աւելի վճարել :

Ն Ո Վ Ք

Նոր Տարուան առաջին նորոքիւնը

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆԻ

ԳԱՆՁ ԻՐԱԳԻՏԱԿԱՆ

Այս զիրքին համար յատկապէս փորագրուած 300 պատկերներով .—
 Անմըձեւիօրէն ընտրելագոյն Դասագիրքը՝ Տարր. Դասընթացքի երկսեռ
 աշակերտներու համար : Դին 5 դրշ. Կեղրոնատեղն է հեղինակին ԳԱ-
 ՐՈՒՆ Դրատունը, Կ. Պոլիս, Մեծ Նոր խան, վերի յարկ, թիւ 55 :